



**«ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ»**

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՀԱՊԱՏԺԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ**

Վանաձոր
Հուլիս 2012



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

COUNTERPART
INTERNATIONAL



Հեղինակային խումբ՝

Արթուր Սաքունց

Տաթևիկ Մատինյան

Արա Ղազարյան

Արտակ Չեյնայան

ծրագրի ղեկավար

փաստաբան, փորձագետ

իրավաբան, փորձագետ

իրավաբան, փորձագետ

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության No AID-111-LA-10-00001 համագործակցության պայմանագրի DFD-A-00-09-00141-00 պայմանագրի շրջանակներում «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակներին՝ «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Սույն վերլուծությունը կարող է օգտակար լինել հասարակության լայն շերտերի, ԲՈՒՀ-երի իրավաբանական բաժինների ուսանողների, իրավաբանների, փաստաբանների համար:

© Հեղինակային խումբ, 2012 թ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ	5
2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
3. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՑԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ	9
4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻԵԴ ԿՑԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍՈՎ.....	20
4.1. Ընդհանուր դրույթներ	20
4.2. Զինված ուժերում	21
4.2.1. Ինքնասպանություն հոգեկան խանգարում ունեցող զինվորականի կողմից	21
4.2.2. Ինքնասպանություն վերադասի ծեծի և նվաստացումների արդյունքում.....	22
4.2.3. Ինքնասպանություն, որտեղ քննությունը կատարվել է առերևույթ թերացումներով, քանի որ ողջամիտ բացատրություն չի տրվել մահվան մի շարք հանգամանքների մասին.....	24
4.3. Քրեակատարողական հիմնարկներում	24
4.3.1. Ինքնասպանություն	25
4.3.2. Կալանավորի սպանություն այլ կալանավորի կողմից	26
4.3.3. Մահ ոստիկանությունում կամ կալանավայրում՝ պաշտոնատար անձի կողմից արգելված վերաբերմունքի արդյունքում	27
4.3.4. Մահ կալանավայրում՝ առողջական խնդիրների արդյունքում	29
4.3.5. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող	



կալանավորի մահը կալանավայրում.....	30
4.3.6. Հացադուլի մեջ գտնվող կալանավորի մահ	30
4.4. Նյարդահոգեբուժական բուժաստատությունում.....	31
4.5. Բարոյական վնասի փոխհատուցում	32
5. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ.....	33
5.1. Իրավիճակի ներկայացում	33
5.2. Քրեական գործերով մասնակցություն	
նախաքննությանը կամ դատաքննությանը.....	48
5.2.1. <u>Գևորգ Կոծինյան</u>	49
5.2.2. <u>Կարո Ավագյան</u>	57
6. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ	
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	63
6.1. <u>Իրավիճակի ներկայացում</u>	63
6.2. <u>Ալավիկ Ոսկանյան</u>	65
7. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ	
ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	75
7.1. <u>Իրավիճակի ներկայացում</u>	75
8. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱՅԼ	
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	79
8.1. <u>Դարոց</u>	79
8.2. <u>Հիվանդանոց</u>	80
8.3. <u>Ոստիկանություն</u>	82
8.4. <u>Արման Ենգիբարյան</u>	84
9. ԱՄՓՈՓՈՒՄ	95
Հավելված 1.....	98
Հավելված 2.....	102



1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՍՍՌ	Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԴՈ	Սահմանադրական դատարանի որոշում
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԼԴՀ	Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
հոդ.	Հոդված
քր. օր.	Քրեական օրենսգիրք
ՀՔԱ	Հելսինկյան քաղաքացիական ասամբլեա
ՌՊԿ	Ручной пулемёт Калашникова
սմ	Սանտիմետր
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՔԿ	Քրեակատարողական
ՔԿՀ	Քրեակատարողական հիմնարկ
ՀՔԾ	Հատուկ քննչական ծառայություն
ՀԿԳ	Հատուկ կարևորագույն գործերով



2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 2-րդ հոդվածը նախատեսում է, որ «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: Կյանքի իրավունքը դասվում է բնական և անօտարելի իրավունքների շարքին: Այնուամենայնիվ, աշխարհի մի շարք երկրներում և Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք նահանգներում մինչ օրս էլ կիրառվում է մահապատիժ՝ որպես բացառիկ պատժամիջոց:

1961 թվականի մարտի 7-ին Հայկական ՍՍՌ հինգերորդ գումարման Գերագույն Սովետի հինգերորդ սեսիայի կողմից ընդունված Հայկական ՍՍՌ քրեական օրենսգիրքը, որը գործել է մինչև 2003 թվականը, նախատեսում էր մահապատիժ պատժատեսակը: 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով բացառվեց մահապատժի կիրառումը: Այնուամենայնիվ, 1990 թվականից 2003 թվականն ընկած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում մահապատժի են դատապարտվել ընդհանուր թվով 42 անձինք, սակայն նրանցից և ոչ մեկի նկատմամբ մահապատիժ չի կիրառվել, քանի որ տարածվել է մորաթորիում՝ այն է՝ պատժի հետաձգում: Նոր ՀՀ քրեական օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո մինչ այդ մահապատժի դատապարտված անձանց պատիժները փոխարինվել է ցմահ ազատազրկմամբ:

Կյանքի իրավունքը, հանդիսանալով մարդու հիմնարար իրավունքներից մեկը, իր ամրագրումն է գտել նաև սահմանադրական մակարդակում: Այսպես, 1995 թվականին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված էր, որ մահապատիժը՝ մինչև դրավերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար: Այնինչ, ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխություններով նախատեսվել է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կա-



որոշ դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Մահապատժի բացառումն իր ամրագրումն է գտել թե՛ եվրոպական և՛ թե՛ ՄԱԿ-ի փաստաթղթերում:

Այսպես, 1983 թվականի ապրիլի 28-ին ընդունված Եվրոխորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությամբ¹ և 1989 թվականի ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի թիվ 13 կամընտիր արձանագրությամբ² բացառվում է մահապատժի կիրառումը՝ բացառապես պատերազմի կամ պատերազմի սպառնալիքի ժամանակ կատարված հանցանքների համար: Իսկ 2002 թվականի Եվրոխորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի կից 13 արձանագրությամբ³ մահապատժի կիրառումը որպես պատժատեսակ ընդհանրապես վերացվեց:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը, վավերացրել է վերոհիշյալ բոլոր 3 փաստաթղթերը:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով տվյալ բնագավառում բոլոր միջազգային փաստաթղթերը և ներպետական օրենսդրության մեջ կատարելով համապատասխան փոփոխություններ, բացառել է պետության ակտիվ միջամտությամբ անձի կյանքի իրավունքի խախտում, սակայն կարևոր է ընդգծել, որ կյանքի իրավունքի ապահովումը չի սահմանափակվում միայն մահապատժի վերացմամբ:

Ներկայումս, Հայաստանում մտահոգիչ է պետության պոզիտիվ պարտականության իրականացումը՝ այն է՝ պաշտոնատար անձինք և պետական մարմինները պետք է որոշակի պոզիտիվ քայլեր ձեռնարկեն անձանց կյանքը և առողջությունը պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է եղել

¹ <http://www.coe.am/docs/signedandratified/114.pdf>

² <http://www2.ohchr.org/english/law/ccpr-death.htm>

³ <http://www.conventions.coe.int/Treaty/Commun/QueVoulezVous.asp?NT=187&CM=8&DF=08/02/2012&CL=ENG>



անձի կյանքի կամ առողջության նկատմամբ ոտնձգություն:

Վերջին տարիների ընթացքում բավական մեծ թիվ է կազմում մահացությունների դեպքերը ՀՀ տարածքում գործող և պետական մարմինների անմիջական վերահսկողության տակ գտնվող փակ և կիսափակ հաստատություններում, որոնց առնչությամբ իրականացված հետաքննության արդյունավետության վերաբերյալ մահացածների հարազատներն ունենում են խիստ մտահոգություններ և դժգոհություններ: Այս բնագավառում պետության պարտավորությունների իրականացումը գնահատվում է որպես խիստ անբավարար և մտահոգիչ:

Սույն վերլուծության նպատակն է ամփոփել ՀՀ տարածքում կյանքի իրավունքի ապահովման վիճակը՝ վեր հանելով օրենսդրության և պրակտիկայի մեջ առկա բացերը և անկատարությունները:



3. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍՈՎ⁴

ՀՀ Սահմանադրության հոդված 15. «Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»:

Մարդու իրավունքների և ազատությունների համակարգում կյանքի իրավունքը միանշանակ ունի հիմնարար արժեք, այն հանդիսանում է բնական և անօտարելի իրավունք: Յուրաքանչյուր իրավական փաստաթղթում հենց դրանով է սկսվում մարդու իրավունքների և ազատությունների ամրագրումը: Այն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 3-րդ հոդվածում, ըստ որի՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության իրավունք: Բնորոշ է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի առաջին կետում ամրագրված դրույթը. «Ապրելու իրավունքը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է: Այդ իրավունքը պահպանվում է օրենքով: Ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից»:

Կյանքի իրավունքի նույնաբնույթ բնորոշում է ամրագրված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թ. կոնվենցիայի 2-րդ հոդվածում. «Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով»: Հիշյալ իրավունքի սահմանման և պաշտպանության առնչությամբ ընդունվել են տասնյակ միջազգային իրավական ակտեր: Ընդ որում, դրանց մի գերակշիռ մասը վերջին շրջանում առավելապես կոչեր է պարունակում՝ ուղղված այն պետություններին, որոնք դեռ չեն հրաժարվել մահապատժի ինստիտուտից (օրինակ, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի Մարդու իրավունքների հանձնաժողովի 2005 թ. ապրիլի 20-ի թիվ 2005/59 և 2008 թ. փետրվարի 26-ի թիվ 62/149

⁴ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության Մեկնաբանություններ, 2010 թ.
<http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf>



բանաձևերը և այլն):

ՀՀ Սահմանադրության հոդված 15-ի հիմնական նպատակը նույնպես յուրաքանչյուր մարդու կյանքի իրավունքի պաշտպանության երաշխավորումն է և, համապատասխանաբար, մարդուն կյանքից զրկելու բացառումը: Կյանքի իրավունքն ամրագրված է եղել նաև Սահմանադրության նախկին խմբագրությամբ 17-րդ հոդվածով: Սակայն, ի տարբերություն գործող կանոնակարգման, նշված հոդվածով ամրագրված է եղել մահապատժի կիրառման որոշ վերապահում. «Մահապատիժը՝ մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով՝ առանձնապես ծանր հանցագործությունների համար»: Գործնականում, Սահմանադրության նախկին խմբագրությամբ գործելու ողջ ժամանակահատվածում երբևէ մահապատիժ չի կիրառվել: Ավելին, արդեն 2003 թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված քրեական օրենսգրքով մահապատիժը հանվել էր, թեպետ Սահմանադրության հիշյալ դրույթը փոխվեց միայն 2005 թվականին:

Մեկնաբանվող հոդվածից բխում են հետևյալ իրավադրույթները.

ա) յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, որին թղթակցում է բոլորի պարտականությունը՝ ձեռնպահ մնալ մարդուն կյանքից զրկելուն ուղղված քմահաճ ոտնձգություններից կամ որևէ կերպ վտանգել այլոց կյանքի իրավունքը,

բ) պետությունը պարտավոր է բոլոր միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու կյանքի իրավունքը,

գ) կյանքի իրավունքը պահպանվում է օրենքով և ոչ ոքի չի կարելի քմահաճ ձևով զրկել կյանքից,

դ) արգելվում է օրենսդրությամբ մահապատժի որևէ հիմքի սահմանում և կիրառում:

Թեպետ Սահմանադրության 15-րդ հոդվածում ընդգծված է մահապատժի դատապարտվելու կամ ենթարկվելու արգելքը, այնուամենայնիվ, կյանքի իրավունքը բովանդակային առումով անհամեմատ լայն է ու ընդգրկուն: Հիշյալ իրավունքը պետությանը



պարտավորեցնում է ստանձնելու և կյանքի կոչելու բազմաձևավալու խիստ պատասխանատու իրավական-կազմակերպական այնպիսի միջոցներ, որոնք լիարժեք երաշխիքներ են ստեղծում հասարակությունում կյանքի անվտանգության համար: Տվյալ դեպքում պետությունը ոչ միայն պարտավոր է իրավասու իրավապահ մարմինների միջոցով նպատակասլաց պայքար տանել հանցավորության դեմ, այլև ապահովել բժշկական պատշաճ սպասարկում, անվտանգ կենսապայմաններ:

Սահմանադրական մի շարք այլ իրավունքներ ևս կոչված են երաշխավորելու կյանքի իրավունքը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 17-րդ հոդվածով ամրագրված՝ խոշտանգումների ենթարկելու, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, ինչպես նաև առանց մարդու համաձայնության գիտական, բժշկական և այլ փորձերի ենթարկելու արգելքը ևս միտված է կյանքի իրավունքի ապահովմանը:

Նույն խնդրի լուծմանն են նպաստում նաև ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված՝ խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը, 33.2-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, 34-րդ հոդվածով ամրագրված՝ մարդու և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունքը և այլն:

Կյանքի իրավունքի խախտման ինքնուրույն տեսակ է գենոցիդը՝ ցեղասպանությունը, բնակչության առանձին խմբերի կազմակերպված և կանխամտածված ոչնչացումը՝ պայմանավորված ազգային, ռասայական, կրոնական և այլ հատկանիշներով:

Կյանքի իրավունքը մարդուն վերապահվում է ծննդյան պահից մինչև մահը, սակայն գործնականում չափազանց բարդ է ամրագրել՝ կյանքի կենսական և ժամանակային սահմանները:

Կյանքի իրավունքը բնավ չի ենթադրում մարդու մահանալու իրավական նորմով ամրագրված իրավունքը: Կյանքից ինքնական



հեռանալու երևույթը հավասարապես անընդունելի է ինչպես հասարակության, այնպես էլ պետության կողմից: Թերևս, այդ դրույթն իր ամրագրումն ստացել է նաև գործող օրենսդրությունում. համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էլթանագիան՝ հիվանդի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով: Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են էլթանագիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Թեպետ կյանքի իրավունքն ակնհայտ բազմիմաստ է, այնուամենայնիվ, վերջինիս սահմանները ճշգրիտ ընդգծելու տեսանկյունից առանցքային նշանակություն ունի մահապատժի և իրավաչափ հարկադրանքի ինստիտուտների առնչությունն այդ իրավունքի հետ: Թերևս հենց այդ նկատառումով է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը, ամրագրելով կյանքի իրավունքը, բավարարվել միայն հետևյալ դրույթով. «Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Սահմանադրությամբ անդրադարձ չկա իրավաչափ հարկադրանքի ինստիտուտին, սակայն դա չի հակասում Սահմանադրությանը:

Այս մոտեցումն ամրագրված է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում:

Ընդ որում, մահապատժի վերացման առնչությամբ միջազգային իրավական ակտերում ևս առկա է մահապատժի կիրառման շրջանակների սահմանափակման անթաքույց միտում: Այսպես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ մեկին չի կարելի զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը»: Հետագայում՝ 1983 թ. ապրիլի 28-ին, ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոն-



վենցիայի թիվ 6 արձանագրության 1-ին հոդվածով ամրագրվեց հետևյալ դրույթը. «Մահապատիժը վերացվում է: Ոչ մեկին չի կարելի մահապատժի դատապարտել կամ մահապատժի ենթարկել»: Միաժամանակ, նույն արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրվեց որոշ վերապահում. «Պետությունը կարող է իր օրենսդրության մեջ մահապատիժ նախատեսել պատերազմի ժամանակ կամ պատերազմի անխուսափելի սպառնալիքի դեպքում կատարված գործողությունների համար. նման պատիժը կիրառվում է միայն օրենքով սահմանված դեպքերում և դրա դրույթներին համապատասխան: Պետությունը Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարին հաղորդում է այդ օրենսդրության համապատասխան դրույթները»:

Ի տարբերություն հիշյալ Կոնվենցիայի, ՀՀ Սահմանադրությամբ բացառվում է օրենսդրությամբ մահապատժի կիրառման որևէ հիմքի ամրագրում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում սպառնիչ նշված են այն հոդվածները, որոնցով ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են օրենքով սահմանափակվել. դրանց ցանկում 15-րդ հոդվածը չկա: Իսկ այն, որ նույն 15-րդ հոդվածը ներառված է ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում, սուսկ նշանակում է, որ այդ իրավունքը չի կարող ժամանակավորապես սահմանափակվել անգամ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ:

Մահապատժի վերացման հարցում էլ ավելի միանշանակ իրավական դիրքորոշում ամրագրվեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրությամբ: Այս առնչությամբ բնորոշ է հատկապես Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2007 թ. ապրիլի 17-ի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ «Բոլոր հանգամանքներում մահապատժի վերացման մասին» թիվ 13 արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապա-



տասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-694 որոշումը, որում հստակ ամրագրվեց այն գաղափարը, ըստ որի՝ «Սույն Արձանագրությունը հանդիսանում է փոխլրացնող գործոն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածի ամբողջական իրացման համար»:

Երկայուն միջազգային հանրությունը միանգամայն արդարացի առավելապես հակված է մահապատժի վերացմանը. շուրջ 100 պետության ներպետական օրենսդրությամբ ևս մահապատիժը վերացված է:

Կյանքի իրավունքի երաշխավորմանը նվիրված սահմանադրական դրույթն իր արտացոլումն է ստացել նաև ՀՀ օրենքներում և նորմատիվ այլ ակտերում: ՀՀ քրեական օրենսգիրքը, պաշտպանելով կյանքի իրավունքը, քրեական պատասխանատվություն է նախատեսում մեկ ուրիշին ինչպես դիտավորությամբ (սպանություն՝ հողվածներ 104-108), այնպես էլ անզգուշությամբ (հողված 109) մահ պատժառելու, ինքնասպանության հասցնելու (հողված 110), ինքնասպանության հակելու (հողված 111), պետական, քաղաքական կամ հասարակական գործչի սպանության (հողված 305), օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի սպանության (հողված 388-ի 2-րդ մաս) համար:

ՀՀ քրեական օրենսդրությամբ պատասխանատվություն է նախատեսված նաև մարդու (մարդկանց) կյանքի համար վտանգ ստեղծող այնպիսի արարքների համար, ինչպիսիք են՝ մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը (հողված 123), մարմնի մասեր կամ հյուսվածքներ տալուն հարկադրելը (հողված 126), վտանգի մեջ թողնելը (հողված 128), հիվանդին օգնություն ցույց չտալը (հողված 129), ահաբեկչությունը (հողված 217), պատանդ վերցնելը (հողված 218), ստոմային էներգետիկայի օբյեկտներում անվտանգության կանոնները խախտելը (հողված 227), ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը (հողված 235), սանիտարահակահամաձարակա-



յին կանոնները խախտելը (հոդված 277), մարդկանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հանգամանքների վերաբերյալ տեղեկություն թաքցնելը (հոդված 278), շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված որոշ հանցագործությունները և այլն:

ՀՀ քրեական օրենսգիրքը համապատասխան դրույթ է պարունակում նաև կյանքի իրավունքին առնչվող՝ հանցանք կատարողներին հանձնելու խնդրի վերաբերյալ: Այսպես, օրենսգրքի հոդված 16-ի («Հանցանք կատարած անձանց հանձնելը») 4-րդ մասի համաձայն՝ եթե նշված անձանց հանձնելը պահանջող երկրի օրենսդրությամբ տվյալ հանցագործության համար մահապատիժ է նախատեսված, ապա հանցանք կատարած անձանց հանձնումը կարող է մերժվել, եթե պահանջող կողմը բավարար երաշխիքներ չներկայացնի, որ մահվան դատավճիռն ի կատար չի ածվի:

ՀՀ քրեական օրենսգիրքը (հոդված 46) կարգավորում է նաև հիմնավորված ռիսկի՝ որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանքի հարցը: Այդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ ռիսկը հիմնավորված չէ և քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե այն ակնհայտորեն զուգորդված է եղել երրորդ անձանց զոհվելու, էկոլոգիական կամ հասարակական աղետի սպառնալիքով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 11-ի («Անձի անձեռնմխելիությունը») 9-րդ մասի համաձայն՝ «Քրեական դատավարության ընթացքում արգելվում է մարդու կյանքին և առողջությանը, շրջակա միջավայրին վտանգ ներկայացնող միջոցներ կիրառել»:

Բնական մահվան դեպքում հետաքննություն չի սկսվում: Եթե հայտնաբերվում է դիակ բռնության հետքերով կամ առանց դրանց, բայց մահվան պատճառները հայտնի չեն, քրեական գործ է հարուցվում: Իսկ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածով նախատեսվում է, որ նման դեպքերում՝ մահվան պատճառների բացահայտման նպատակով դատաբժշկական փորձաքննության նշանակումը պարտադիր է:



Տուժողի մահվան դեպքում նրա իրավահաջորդները, ՀՀ գործող օրենսդրության համաձայն, իրավունք ունեն փոխհատուցում ստանալ մահվամբ պատճառված վնասի չափով՝ քաղաքացիական պատասխանատվության կարգով (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 1081-1087):

ՀՀ-ում ընդունվել և գործում են մի շարք այլ իրավական ակտեր, որոնք այս կամ այն կերպ առնչվում են կյանքի իրավունքին: Մասնավորապես, «Բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը սահմանում է բնակչության սանիտարահամաձարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը և բարենպաստ պայմաններ ապահովում նրա և ապագա սերունդների կենսունակության համար:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում (հոդված 16): Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ իրենց մեղքով մարդու առողջությանը հասցրած վնասի համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները, ապօրինի բժշկական գործունեությամբ զբաղվողները պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնավորապես, բժշկի կողմից հիվանդին օգնություն ցույց չտալը քրեական պատասխանատվություն է առաջացնում ՀՀ քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածով: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ բժիշկն առանց հարգելի պատճառների չի կատարում հիվանդին բժշկական օգնություն ցույց տալու իր պարտականությունները:



«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում Էվթանազիայի արգելումը:

Այն անձինք, ովքեր հիվանդին գիտակցաբար դրդում են Էվթանազիայի կամ իրականացնում են այն, պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսպես, Էվթանազիայի դեպքերն ընկնում են ՀՀ քրեական օրենսգրքով սպանության համար պատասխանատվություն նախատեսող նորմերի գործողության տակ: Քրեական օրենսգիրքը նախատեսում է նաև Էվթանազիայի հիմնախնդրի հետ առնչվող մեկ այլ դրույթ (հոդված 62-ի 1-ին մասի 5-րդ կետ), որի համաձայն՝ հանցանքը կարեկցանքի շարժառիթով կատարելը համարվում է պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Այս առումով Եվրոպական դատարանի պրակտիկայում առաջացել և շարունակում են առաջանալ լուծում պահանջող մի շարք խնդիրներ: Մասնավորապես, շարունակում են «բաց» մնալ հետևյալ հարցերը. արդյո՞ք կյանքի իրավունքը պետք է դիտել որպես ապրելու՝ մարդու պարտականություն և հնարավոր է արդյո՞ք այդ իրավունքից նրա կամավոր հրաժարումը: Էվթանազիայի հիմնախնդրի լույսի ներքո կյանքի իրավունքը ձեռք է բերում լրիվ այլ՝ դրա ավանդական ընկալմանը հակադիր բնույթ: Խոսքն ապրելու և մեռնելու իրավունքների հարաբերակցության մասին է:

Մարդու կյանքի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների կանխարգելմանն է ուղղված «Մարդու իմունային անբավարարության վիրուսի հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքը: Ընդ որում, ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված այլ անձին ՄԻԱՎ-ի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելու, ինչպես նաև դրանով վարակելու համար: Նշված հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ այն անձինք, ովքեր գիտեին իրենց մոտ այդ հիվանդության առկայության մասին և անհրաժեշտ միջոցներ չեն ձեռնարկել ուրիշին վարակելը կանխելու համար: Նշված հանցա-



գործության համար պատասխանատվության կարող են ենթարկվել նաև այն բուժաշխատողները, ովքեր վիրահատության, արյան փոխներարկման, սրսկման և նման այլ դեպքերում նախազգուշական համապատասխան միջոցներ չեն ձեռնարկել և ուրիշներին ենթարկել են ՄԻԱՎ-ով վարակելու վտանգի:

Կյանքի իրավունքի պաշտպանությանն է առնչվում նաև «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքը, որի հոդված 3-ի համաձայն՝ կենդանի դոնորից փոխպատվաստման նպատակով կարող է վերցվել միայն զույգ օրգաններից մեկը, կենտ օրգանի մասը կամ հյուսվածքը, որոնց բացակայությունը չի կարող առաջացնել դոնորի կյանքի համար վտանգ ներկայացնող փոփոխություններ:

Ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի՝ կյանքի իրավունքի խախտում չի համարվում իրավաչափ ուժի գործադրման հետևանքով կյանքից զրկելը:

Այսպես, Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

«Կյանքից զրկելը չի համարվում սույն հոդվածի խախտում, եթե այն հետևանք է ուժի գործադրման, ինչը բացարձակապես անհրաժեշտ է՝

ա) ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար,

բ) օրինական ձերբակալում իրականացնելու կամ օրինական հիմքերով կալանավորված անձի փախուստը կանխելու համար,

գ) խռովությունը կամ ապստամբությունը ծնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողություն ձեռնարկելու համար»:

Այս հիմքերն ամբողջությամբ չէ, որ արտացոլված են ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով, որը նվիրված է հրազենի կիրառման հիմքերին, խռովությունը կամ ապստամբությունը ծնշելու նպատակով զենքի կիրառման հիմք նախատեսված չէ: Տվյալ դեպքում, բնական է, որ հրազենի կիրա-



ռումը չի բացառում մարդուն կյանքից զրկելը:

Միաժամանակ, նույն այդ հոդվածում որոշ դրույթներ համահունչ չեն հիշյալ Կոնվենցիայի պահանջներին: Այսպես, նշված 32-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ կարող է հրազեն կիրառվել նաև «ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար հետախուզվողի փախուստը խափանելիս»: Այս դրույթն իրավաչափ կլիներ, եթե ամրագրվեր հրազենի կիրառում՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու հիմքով անձին ձերբակալելիս փախուստը կանխելու նպատակով: Մասամբ նույն դիտողությունը վերաբերում է նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին: Առավել նպատակահարմար կլիներ այդ կետերի դրույթները խմբագրել և ամրագրել մեկ կետում:

Կյանքի իրավունքի խախտում չէ նաև անհրաժեշտ պաշտպանության կամ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում անձին կյանքից զրկելը: Այդ ինստիտուտները նախատեսված են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի համապատասխանաբար 42 և 44-րդ հոդվածներով: Մասնավորապես, 42-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է. «Անձի կյանքի համար վտանգավոր բռնության կամ այդպիսի բռնության իրական սպառնալիքով զուգորդված ոտնձգությունից պաշտպանվելիս կարող է պատճառվել ցանկացած վնաս, այդ թվում՝ մահ»:

Սահմանադրությամբ ամրագրված իմաստով կյանքից զրկել չի համարվում նաև պատերազմի ժամանակ՝ հակառակորդ բանակի «մարտնչող կազմի դեմ» ուղղված գործողությունների արդյունքում մահ պատճառելը: Այսպես, ժնկյան 1949 թ. օգոստոսի 12-ի դաշնագրերը բնորոշում են պատերազմական գործողությունների ժամանակ «հովանավորվող անձանց» հասկացությունը. նրանք են՝ գործող բանակներում վիրավորներն ու հիվանդները, ծովում զինված ուժերի վիրավորները, հիվանդները և նավաբեկյալները, ռազմագերիները, պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչությունը, որոնց կյանքից զրկելը համարվում է քրեական հանցագործություն:



4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՂԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԴԵՂԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԻԵԴ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍՈՎ

4.1. Ընդհանուր դրույթներ

Կյանքի իրավունքը, ամրագրված 2-րդ հոդվածով, նախատեսում է *նեգատիվ* և *պոզիտիվ* պարտավորություններ Կոնվենցիայի անդամ պետությունների համար: **Նեգատիվ պարտավորությունը** սահմանում է, որ պետությունը՝ ի դեմս պաշտոնատար անձանց, պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններ կատարելուց, որի արդյունքում անձը կարող է զրկվել կյանքից: Ի տարբերություն արգելված վերաբերմունքի, կյանքի իրավունքը բացարձակ չէ և Կոնվենցիան թույլ է տալիս անձին զրկել կյանքից երեք հիմքերով՝ ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար, օրինական ձերբակալում իրականացնելու կամ կալանավորված անձի փախուստը կանխելու նպատակով և խռովությունը կամ ապստամբությունը ճնշելու նպատակով օրենքին համապատասխան գործողությունը ձեռնարկելու համար: Այդուհանդերձ, նշված բացառությունները կիրառելու համար չափազանց բարձր շեմ է սահմանվում և պետությունները պետք է կարողանան հիմնավորել, որ կյանքից զրկելը եղել է ծայրահեղ միջոց:

Պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ պաշտոնատար անձինք և պետական մարմինները պետք է որոշակի պոզիտիվ քայլեր ձեռնարկեն անձանց կյանքը և առողջությունը պաշտպանելու ուղղությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե ում կողմից է եղել անձի կյանքի կամ առողջության նկատմամբ ոտնձգություն: Պոզիտիվ պարտավորության շրջանակների մեջ է մտնում նաև հանրային մեղադրանքի ուժով քրեական գործ հարուցելու և քննություն կատարելու պահանջը: Այս առումով ՄԻԵԴ-ը սահմանել է չորս պարտավորություններ. 1) քննությունը պետք է լինի արդյու-



նավետ, 2) այն պետք է հանգեցնի մեղավորների բացահայտմանը, 3) պատասխանատվության ենթարկելուն և 4) համարժեք պատժի նշանակմանը: Նշվածից եզրակացնում ենք, որ ՄԻԵԴ-ի վերահսկողության շրջանակների մեջ է մտնում ոչ միայն քրեական գործի հարուցման հանգամանքը կամ քրեական վարույթի իրականացման եղանակները, այլ նաև պատժի նշանակման և կատարման տիրույթները: Ըստ եվրոպական դատարանի, «*եթե պետության գործակալը [պաշտոնատար անձը] մեղադրվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող հանցագործության կատարման մեջ, ապա քրեական վարույթը չպետք է ունենա վաղեմության ժամկետ և չպետք է թույլատրվի նման անձանց նկատմամբ կիրառել ներում կամ համաներում*»⁵: Նույն մոտեցումը վերաբերում է նաև այնպիսի միջոցներին, ինչպիսին են պատիժը ժամանակավորապես չկիրառելու, փորձաշրջան կիրառելու և պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու միջոցները⁶: Նշվածը հավասարապես վերաբերում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակների մեջ մտնող գործերին:

Ուսումնասիրվել են կյանքի իրավունքի հետ կապված գործեր, որտեղ դեպքերը տեղի են ունեցել զինված ուժերում, քրեակատարողական հիմնարկում և նյարդահոգեբուժական բուժհաստատությունում:

4.2. Չինված ուժերում

4.2.1. Ինֆառանություն հոգեկան խանգարում ունեցող զինվորականի կողմից

Եվրոպական դատարանը նման դեպքերում գործը քննում է նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների լույսի ներքո: Հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

1) արդյոք իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած

⁵ Օկալին ընդդեմ Թուրքիայի, թիվ 52067/99, 17/10/2006, § 76:

⁶ Օկալի, §§ 36, 74:



լինեին, որ առկա էր իրական վտանգ, որ զինվորը կարող էր վնասել ինքն իրեն,

2) եթե գիտեին, ապա արդյոք իշխանություններն արել են ամեն ինչ, որ ողջամտության սահմաններում պետք էր սպասել նրանցից, որպեսզի այդ ռիսկը վերացվեր,

3) այս առումով պետական մարմինները կրում են օպերատիվ-կանխարգելող միջոցներ կիրառելու պոզիտիվ պարտավորություն,

4) դա հատկապես վերաբերում է բանակի պայմաններին, որտեղ անձանց վստահված է գենք:

*Ատամանն ընդդեմ Թուրքիայի*⁷ գործով դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ զինվորական հիվանդանոցի հոգեբուժական բաժինը չէր տեղեկացրել զորանոցի հրամանատարությանը, որ զինվորի մոտ նկատվել էին հոգեկան խանգարումներ (պոզիտիվ պարտավորության չկատարում), իսկ քրեական գործի քննության շրջանակներում դատախազը չէր անդրադարձել այդ հանգամանքին, որը հակառակ դեպքում հնարավորություն կտար պարզել պատասխանատու անձանց շրջանակները և մեղքի չափը յուրաքանչյուրի դեպքում (արդյոք հիվանդանոցի բժիշկներն էին թերացել, թե զորամասի հրամանատարությունը)՝ որը հակառակ դեպքում կապահովեր մեղավորներին բացահայտելու, պատժելու և համարժեք պատիժ նշանակելու պետության պոզիտիվ պարտավորության կատարումը: Հետևաբար, խախտվել էր նաև արդյունավետ քննություն կատարելու պոզիտիվ պարտավորությունը:

4.2.2. Ինֆատուանություն վերադասի ծեծի և նվաստացումների արդյունքում

*Աբդուլլահ Յիլմիզն ընդդեմ Թուրքիայի*⁸ գործով (որտեղ զինվորը կատարել էր ինքնասպանություն սերժանտի կողմից պարբերաբար ծեծի, վիրավորանքների և նվաստացումների ենթարկվե-

⁷ Գանգատ թիվ 46252/99, վճիռը կայացվել է 27/04/2006թ.:

⁸ Գանգատ թիվ 21899/02, 17/07/2008:



լու արդյունքում) եվրոպական դատարանը կասկածի տակ է դրել բանակի սերժանտական կազմի պիտանելիության ապահովման ներպետական կառուցակարգերի արդյունավետությունը: Մանրամասնորեն քննության առնելով դեպքի օրվա բոլոր փաստերը, որոնք վերաբերում էին սերժանտի վարքագծի դրսևորումներին և արարքներին՝ Դատարանը նշել է, որ զինվորների նկատմամբ որպես սերժանտ նշանակվել էր մի մարդ, ով իր անձնական և մասնագիտական հատկանիշներով չէր համապատասխանում նման աշխատանքի պիտանելիության պահանջներին և այդ առումով սահմանել է, որ Թուրքիան չի կատարել իր պոզիտիվ պարտավորությունը: Դատարանը չի անդրադարձել բողոքի մնացած մասերին, որը կարծում ենք հիմնավորված չէր: Օրինակ, ըստ փաստերի, տվյալ սերժանտը ի վերջո դատապարտվել էր զինվորին ֆիզիկական վնաս պատճառելու հիմքով և նրա նկատմամբ պատիժ էր սահմանվել հինգ ամսվա ազատազրկումը, սակայն այդ ժամկետն էլ որոշվել էր կիրառել պայմանականորեն՝ վերջինիս դրական վարքից ելնելով: Այսպիսով, չի կատարվել համարժեք պատիժ նշանակելու պոզիտիվ պարտականությունը. քրեական հետապնդումը չի իրականացվել ինքնասպանության հասցնելու հիմքով (մինչդեռ գործի փաստերը և վկաները հստակորեն նշել են, որ զենքն իր վրա ուղղելուց առաջ զինվորը բացականչել էր, որ ինքնասպանությունը կատարում է իր հանդեպ արգելված վերաբերմունքից դրդված) և նշանակվել է ակնհայտորեն մեղմ պատիժ, որն էլ պայմանականորեն չի կիրառվել: Ըստ ՄԻԵԴ նախադեպային իրավունքի, արգելվում է խոշտանգման համար դատապարտված անձանց նկատմամբ կիրառել ներում, համաներում, պատժի կատարման պայմանական հետաձգման միջոցներ:



4.2.3. Ինֆառաանություն, որեղ ֆնությունը կասարվել է առերևույթ թերացումներով, ֆանի որ ողջամիս բացասություն չի սրվել մահվան մի բարհանգամանֆների մասին

*Բեքերն ընդդեմ Թուրքիայի*⁹ գործով դատարանը նշել է, որ մահվան հանգամանքների առումով հարուցված քննությունը չի պատասխանել մի շարք հիմնարար հարցերի, որոնք վերաբերում էին մահվան հանգամանքներին, ինչպես նաև այն հանգամանքը, որ իշխանությունների տված մի շարք բացատրություններ որևէ կերպ չէին տեղավորվում առողջ տրամաբանության շրջանակներում (օրինակ, ինչպես կարող էր զինվորը կատարած լինել երրորդ կրակոցը, եթե քննությունը հաստատել էր, որ մահը վրա էր հասել երկրորդ կրակոցից, կամ ինչպես կարող էր զինվորը կրակած լինել գլխի ձախ կողմին, եթե զինվորը աջիկ էր, կամ արդյոք արժանահավատ էին երկու սպա վկաների ցուցմունքները այն մասին, որ երկու կրակոցների արձակման պահին իրենք վախից ու շոկից փակել էին իրենց դեմքը, կամ արդյոք ողջամիտ էր այն հանգամանքը, որ զենքը, որով ենթադրաբար կատարվել էր ինքնասպանությունը, չէր ենթարկվել դատահետքաբանական փորձաքննության, որպեսզի պարզվեր մատնահետքերի առկայությունը և այլն):

4.3. Ջրեակասարողական հիմնարկներում

Կյանքի իրավունքի հետ կապված գործերը քննվել են հետևյալ փաստական հանգամանքների հիմքով.

- 1) ինքնասպանություն,
- 2) կալանավորի սպանություն այլ բանտարկյալների կողմից,
- 3) մահ ոստիկանությունում կամ կալանավայրում՝ պաշտոնատար անձի կողմից արգելված վերաբերմունքի արդյունքում,
- 4) մահ կալանավայրում՝ առողջական խնդիրների արդյունքում,

⁹ •Գանգատ թիվ 27866/03, 24/03/2009:



- 5) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորի մահ կալանավայրում,
- 6) հացադուլի նստած կալանավորի մահ:

4.3.1. Ինֆաստանություն

Եվրոպական դատարանը գործը քննում է պոզիտիվ պարտավորության ներքո: Ուսումնասիրվում են հետևյալ հարցերը.

1) առաջին, արդյոք կալանավորը ունեցել է ինքնասպանության կամ ինքնախեղման միտումներ կամ արդյոք տառապել է նման հոգեկան հիվանդությամբ մինչև կալանավայր ընդունվելը կամ մինչև դեպքի տեղի ունենալը,

2) երկրորդ, արդյոք կալանավայրի ղեկավարությունը տեղյակ է եղել վերը նշվածի մասին: Եթե այո, ապա այդ պահից բարձրանում է պոզիտիվ պարտավորության առկայության հարց. պոզիտիվ պարտավորությունը առաջանում է այն դեպքում և այն պահից, երբ հաստատվում է, որ իշխանությունները գիտեին կամ պետք է, որ իմացած լինեին, որ անձը ուներ ինքնասպանության կամ ինքնախեղման միտումներ կամ հիվանդություն,

3) երրորդ, որպես պոզիտիվ պարտավորության կատարում, իշխանությունները պարտավոր են կիրառել օպերատիվ-խափանման գործողություններ՝ պաշտպանելու համար այն անձին, ում կյանքը իրական վտանգի տակ է իրենից կամ այլ անձանցից, այդուհանդերձ, կյանքի վտանգված լինելու ոչ բոլոր իրավիճակներն են պետության համար ստեղծում պոզիտիվ պարտավորություն,

4) չորրորդ, դատարանը ուսումնասիրում է փաստերը՝ պարզելու համար, թե արդյոք իշխանությունները ողջամտության սահմաններում արել են հնարավոր ամեն ինչ, որպեսզի նման ռիսկը չէզոքացվի, այսինքն դատարանը փնտրում է բացթողում (անգործություն) իշխանության գործողություններում, որը ցանկացած այլ պարագայում նրանք թույլ չէին տա¹⁰,

5) արդյունավետ քննության պահանջը ինկորպորացվում է

¹⁰ Քեեեանան ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 27229/95, 03/04/2001, § 99:



վերը նշված հարցերի մեջ:

Քեննանի գործում (տե՛ս ցանկը) քրեակատարողական հիմնարկում անձը սկսել էր դրսևորել տարօրինակ վարքագիծ: Արձանագրվել էր, որ կալանավայրի աշխատակիցները տեսել էին, թե ինչպես էր նա իր շորից պատրաստել օղակ: Այդ պահից նրա նկատմամբ սկսվել էր իրականացվել հսկողություն, սակայն այն չէր կրում մշտական բնույթ, այլ դեպքից դեպք՝ երբ բժիշկները հայտնում էին հոգեվիճակի վատթարացման փոփոխության մասին: Նման իրավիճակներից մեկի ընթացքում, երբ կալանավորը գտնվելիս է եղել մշտական հսկողության տակ մենախցում, օգտվելով հսկիչի 10 րոպե բացակայությունից՝ վերջինս կատարել է ինքնասպանություն: Նման իրավիճակում Եվրոպական դատարանը 2-րդ հոդվածի խախտում չի արձանագրել, քանի որ վերահսկողությունը ընդհանուր առմամբ կատարվել է պատշաճ, և, մյուս կողմից, չպետք է պետության վրա դրվի պոզիտիվ պարտավորության այնպիսի բեռ, որը հնարավոր չլինի կատարել: Այդուհանդերձ, նույն փաստական հանգամանքներով դատարանը արձանագրել է 3-րդ հոդվածի խախտում՝ հոգեկան հիվանդությամբ տառապող անձին պատժախցում պահելու համար:

4.3.2. Կալանավորի տրանսպորտում այլ կալանավորի կողմից

1) Դատարանը գործը քննում է պոզիտիվ պարտավորության ներքո, մասնավորապես, թե արդյոք կատարվել է արդյունավետ քննություն.

- i. պետությունը կրում է պոզիտիվ պարտավորություն, որպեսզի պաշտպանի կալանավորի կյանքը և առողջությունը իրենից և այլ անձանցից:
- ii. Քրեական գործ պետք է հարուցվի բոլոր պարագայում: Այս առումով քաղաքացիական հայցի շրջանակներում փոխհատուցման տրամադրումը, եթե քրեական գործ չի



հարուցվել, չի բավարարի Կոնվենցիայի պահանջը¹¹:

- iii. Ցանկացած այլ բնույթի վարույթի շրջանակներում կատարված քննությունը չի բավարարի արդյունավետ քննության պահանջը, եթե.
 - a. քննությունն իրականացվել է նկատելի թերություններով,
 - b. չի ապահովվել վկաների ներկայությունը,
 - c. չի ապահովվել տուժողի իրավահաջորդների ներկայությունը և մասնակցությունը,
 - d. վարույթն իրականացնող մարմինը չի ունեցել ինստիտուցիոնալ անկախություն,
 - e. բացակայել է հանրային վերահսկողությունը,
 - f. վարույթը չի իրականացվել բավարար արագությանը:

Ակնհայտ է, որ միայն քրեական դատավարությունը կարող է ապահովել վերը նշված երաշխիքները: Սակայն, նույնիսկ եթե քրեական դատավարությամբ նշված երաշխիքները չեն պահպանվել, կարելի է համարել, որ տեղի է ունեցել խախտում:

4.3.3. Մահ ուսիկանությունում կամ կալանավայրում՝ դառննասար անձի կողմից արգելված վերաբեր- մունքի արդյունքում

Դատարանը գործը քննում է նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների հիմքերով: Հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

- 1) արդյոք անձը ունեցել է ֆիզիկական վնասվածքներ մինչև ոստիկանություն կամ կալանավայր տարվելը,
- 2) եթե մինչև ոստիկանություն տարվելը եղել է առողջ և չի ունեցել որևէ ֆիզիկական վնասվածք, իսկ կան փաստեր, որ

¹¹ Պոլս ու Օդրի Էդվարդսն ընդդեմ ՄԹ, թիվ 46477/99, 14/03/2002, § 74:



անձի մարմնի վրա առկա են եղել ֆիզիկական վնասվածքներ ոստիկանություն տարվելուց հետո, ապա դատարանը առաջնորդվում է փաստի կանխավարկածով առ այն, որ ոստիկանությունում կամ կալանավայրում անձը ենթարկվել է արգելված վերաբերմունքի,

- 3) եթե առաջանում է փաստի կանխավարկած, ապա ապացուցման բեռը ինքնատինքյան տեղաշարժվում է պետության վրա,
- 4) եթե պետությունը որպես պատասխանող կողմ չի ներկայացնում որևէ ողջամիտ բացատրություն վնասվածքների առաջանալու կապակցությամբ, ապա անկախ որևէ հանգամանքից (օրինակ՝ ապացույցի բացակայություն) դատարանը համարում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում պետական մարմինների կողմից՝ նեգատիվ պարտավորության տեսանկյունից,
- 5) իսկ եթե բացակայում է որևէ փաստ արգելված վերաբերմունքի ենթարկված լինելու մասին, դատարանը հարցը քննում է պոզիտիվ պարտավորության տեսանկյունից՝ քննության արդյունավետության իմաստով: Այս առումով դատարանը հաշվի է առնում, թե արդյոք քննությամբ պարզվել է մահվան պատճառը: Եթե քննությամբ չի պարզվել մահվան պատճառը, այսինքն չի պարզվել, որ մահը տեղի է ունեցել բնական ճանապարհով, ապա դատարանը համարում է, որ տեղի է ունեցել կյանքի իրավունքի դատավարական պահանջի խախտում¹²:

¹² Թանլին ընդդեմ Թուրքիայի, թիվ 26129/95, 10/04/2001, § 140-147:



4.3.4. Մահ կալանավայրում՝ առողջական խնդիրների արդյունում

Դատարանը գործը քննում է պոզիտիվ պարտավորության հիմքով: Հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.

- 1) արդյոք կալանավայրն ուներ բավարար պայմաններ կալանավորին անհրաժեշտ բժշկական խնամքը տրամադրելու համար, եթե այո, արդյոք այդ պայմանները հասու են եղել անձին,
- 2) արդյոք կալանավայրն ուներ բավարար պայմաններ հիվանդ կալանավորին անհրաժեշտ մասնագիտական բուժում տրամադրելու համար, եթե այո, արդյոք նման բուժում տրամադրվել է,
- 3) եթե կալանավայրը չուներ բավարար պայմաններ՝ մասնագիտացված անձնակազմ և սարքավորում անհրաժեշտ բժշկական խնամք կամ մասնագիտացված բուժում տրամադրելու համար և այդպիսի պայմաններում հիվանդ կալանավորը շարունակվել է պահվել կալանավայրում (չի տեղավորվել քաղաքացիական բժշկական հաստատություն), ապա նրա մահանալու դեպքում առաջ է գալիս պետության պատասխանատվության հարց՝ պոզիտիվ պարտավորության ներքո,
- 4) արդյունավետ քննության պայմանը որպես ընդհանուր պահանջ գործում է: Դատարանը հաշվի է առնում հետևյալ հանգամանքները.
 - a. արդյոք քննությունը ընթացել է պատշաճ արագությամբ,
 - b. արդյոք քննության շրջանակները դիտավորյալ չեն նեղացվել,
 - c. արդյոք տուժողի իրավահաջորդները ներգրավվել են քննությանը,
 - d. արդյոք տուժողի իրավահաջորդն ունեցել է քաղաքացիական հայցի հնարավորություն վնասների փոխհատուցման համար¹³:

¹³ Տե՛ս Տարարիկան ընդդեմ Ռուսաստանի, թիվ 4353/03, 14//12/2006, § 76-104:



4.3.5. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորի մահը կալանավայրում

Դատարանը հարցը քննում է պոզիտիվ պարտավորության լույսի ներքո: Կիրառում է գրեթե նույն մոտեցումները, ինչ ինքնասպանության դեպքում:

- 1) հոգեկան հիվանդները կալանավայրում առանձնապես խոցելի խումբ են,
- 2) արդյոք իշխանությունները տեղյակ էին, որ նա ուներ հոգեկան խանգարումներ և ինքնախեղման միտումներ,
- 3) արդյոք իշխանությունները կիրառել են բոլոր անհրաժեշտ միջոցները նվազեցնելու ինքնախեղման ռիսկը,
- 4) արդյոք իշխանությունները փորձ արել են կալանավորին հոգեբուժարան տեղավորելու համար, եթե ոչ, արդյոք հնարավորություն ունեցել են տրամադրել համարժեք բուժում կալանավայրում,
- 5) արդյոք կալանավորի մահվան և հոգեկան վիճակի միջև եղել է պատճառային կապ, օրինակ, արդյոք այն հանգամանքը, որ կալանավորի նկատմամբ չի կիրառվել վերահսկողություն վերջինիս կողմից իր նկատմամբ նշանակված դեղահաբերը ընդունելու համար, պատճառ է հանդիսացել ինքնասպանության կամ ինքնախեղման,
- 6) քննություն կատարելու պայմանը որպես ընդհանուր պահանջ գործում է:

4.3.6. Հացադուլի մեջ գտնվող կալանավորի մահ.

Դատարանը գործը քննում է պոզիտիվ պարտավորության ներքո և հաշվի է առնում հետևյալը:

- 1) պետությունը չի կարող պատասխանատվության կանչվել այնպիսի հանգամանքներում, երբ հացադուլի մեջ գտնվող անձը հրաժարվել է ընդունել սնունդ, որի արդյունքում նա մահացել է,



- 2) այնքանով, որքանով ապահովվել է մասնագիտացված բժշկական խնամքի տրամադրումը, պետությունը կատարել է իր պարտավորությունները:

4.4. Նյարդահոգեբուժական բուժհաստատությունում

Որքան էլ զարմանալի է, սակայն Եվրոպական դատարանը դեռ չի կայացրել վճիռ այնպիսի փաստացի հիմքերով, որտեղ անձի մահը կամ սպանությունը տեղի է ունեցել նյարդահոգեբուժական բուժհաստատությունում: Ներկայումս Եվրոպական դատարանը քննում է երկու գործ, որոնք վերաբերում են Ռումինիայի երկու նյարդահոգեբուժական բուժհաստատություններում մահվան դեպքերին, սակայն դեռ որոշում չի կայացրել (տե՛ս Մալակուի և Կամպեանոյի գործերը Հավելված 1-ում):

Այդուհանդերձ, դատարանը քննել է բազմաթիվ գործեր, որոնք վերաբերում են անձի մահվանը հիվանդանոցներում և այդ առումով ընդունված նախադեպային ձևակերպումը հետևյալն է. [պոզիտիվ պարտավորության պահանջը] կիրառելի է նաև հանրային առողջապահության ոլորտում: Պոզիտիվ պարտավորությունը պետություններից պահանջում է ստեղծել կառուցակարգեր, որպեսզի հիվանդանոցները՝ հանրային կամ մասնավոր, ստիպված լինեն ընդունել պատշաճ միջոցներ իրենց պացիենտների առողջությունը պաշտպանելու ուղղությամբ: Պոզիտիվ պարտավորությամբ պահանջվում է նաև ապահովել արդյունավետ անկախ դատական համակարգ մահվան պատճառները պարզելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար: Հետևաբար, բոլոր այն չափանիշները և սկզբունքները, որոնք դատարանը կիրառում է այլ փակ հաստատություններում մահվան դեպքերի հիմքով գանգատների առնչությամբ, կիրառելի են նաև նյարդահոգեբուժական բուժհաստատությունների առնչությամբ: Իսկ հետագա զարգացումները կախված են Մալակուի և Կամպեանոյի գործերով որոշումներից:

ՄԻԵԴ վերաբերելի որոշումների ցանկը ներկայացված է հավելված 1-ում:



4.5. Բարոյական վնասի փոխհատուցում

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 2-րդ, 3-րդ (արգելված վերաբերմունք) հոդվածներով սահմանված իրավունքների խախտման համար սկզբունքորեն պետք է տրամադրվի ոչ նյութական (բարոյական) վնասի դիմաց դրամական փոխհատուցում՝ որպես իրավական պաշտպանության եղանակ¹⁴: Նշված երկու իրավունքների ցուցակին Դատարանը վկայակոչված նախադեպում ավելացրել է նաև անօրինական ազատազրկման դիմաց պարտադիր դրամական փոխհատուցման տրամադրումը՝ Կոնվենցիայի թիվ 7 Արձանագրության 3-րդ հոդվածի հիմքով¹⁵: Այսպիսով, ի տարբերություն Կոնվենցիայով սահմանված բազմաթիվ այլ նյութական իրավունքների, միայն վերը նշված իրավունքների խախտման դեպքում է առայժմ Դատարանը սահմանել, որ արդարացի փոխհատուցումը պետք է պարտադիր կերպով ուղեկցվի դրամական փոխհատուցման տրամադրման եղանակով: Նշվածից եզրահանգում ենք, որ պետության ներպետական իրավական համակարգում նման կառուցակարգի բացակայությունը ինքնին հանգեցնում է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտմանը:

¹⁴ Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 22996/06, 12/06/2012:

¹⁵ Տե՛ս վճռի § 51-52 կետերը:



5. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆԵԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ


ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

5.1. Իրավիճակի ներկայացում

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 2011 թվականի ընթացքում իրականացրել է զանգվածային լրատվամիջոցների մոնիթորինգ և քաղաքացիների ահազանգերի հիման վրա արագ արձագանքում՝ նպատակ ունենալով գրանցել հայաստանյան զինված ուժերում մահացության դեպքերը, դիտարկել ՉԼՄ հրապարակումների միջոցով այդ դեպքերի առնչությամբ քրեական գործերի հարուցման, նախաքննության և դատաքննության ընթացքը: Որոշ դեպքերում կազմակերպությունը, գործով նախաքննությանը կամ դատաքննությանը անմիջականորեն մասնակից դարձնելով փաստաբաններին կամ կազմակերպության ներկայացուցիչներին կամ որպես կասկածյալի/մեղադրյալի պաշտպան կամ էլ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, կյանքի իրավունքին առնչվող գործի նկատմամբ «ներսից» է իրականացրել քաղաքացիական վերահսկողությունը:

Այսպես, 2011 թվականի ընթացքում կազմակերպությունը գրանցել է ՀՀ զինված ուժերում մահացության 39 դեպք, որոնք որակվել են հետևյալ կերպ.

- Ա) 11-ը՝ հրադադարի ռեժիմի խախտում,
- Բ) 5-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտում,
- Գ) 6-ը՝ դժբախտ պատահար,
- Դ) 3-ը՝ անվտանգության կանոնների խախտում,
- Ե) 1 -ի պատճառները հայտնի չեն,
- Ձ) 10-ը՝ ինքնասպանություն,
- Բ) 2-ը՝ առողջական խնդրների պատճառով,
- Ը) 1 -ը՝ դիտավորյալ սպանություն:



Ա. Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքեր

ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունից NEWS.am էլեկտրոնային կայքէջին տրամադրված տեղեկատվության համաձայն¹⁶ 2011 թվականին հակառակորդը Ղարաբաղ-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում հրադադարի ռեժիմը խախտել է 12.600 անգամ, 2010-ին՝ 7.200 անգամ, 2009-ին՝ 4.600 անգամ: 2008 թվականին արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտման 3.500 դեպք, 2007-ին՝ 1.400, 2006-ին՝ մոտ 600 դեպք:

2011 թվականի ընթացքում գրանցված հրադադարի ռեժիմի խախտման արդյունքում արձանագրվել է ընդհանուր թվով 11 մահ.

1. Ամսաթիվ

Վայր

Չոհ

2011 թ. հունվարի 20-ին
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (այսուհետ՝ ԼՂՀ) և Ադրբեջանի բաժանարար գծում
 Ժամկետային զինծառայող Հովիկ Սուքիսյան

¹⁶ <http://www.armtown.com/news/am/news/20120405/100024/>



- 2. Ամսաթիվ** 2011 թ. մարտի 4-ին
Վայր ԼՂՀ և Ադրբեջանի շփման գծի հյուսիսարևելյան (Վերին Չայլու) մասում
Ձոռ Ժամկետային զինծառայող **Գրիգոր Շախկյան**
- 3. Ամսաթիվ** 2011 թ. մարտի 10-ին
Վայր ԼՂ Կուրոպատկինո գյուղի ուղղությամբ տեղակայված դիրքերում
Ձոռ Ժամկետային զինծառայող **Արթուր Աղաբաբյան**
- 4. Ամսաթիվ** 2011 թ. մարտի 17-ին
Վայր ԼՂՀ Ասկերանի ուղղությամբ տեղակայված դիրքերում
Ձոռ Ժամկետային զինծառայող **Ահարոն Հայրապետյան**
- 5. Ամսաթիվ** 2011 թ. ապրիլի 28-ին
Վայր ԼՂՀ և Ադրբեջանի բաժանարար գծի Մարտունու ուղղությամբ տեղակայված դիրքերից մեկում
Ձոռ Ժամկետային զինծառայող **Վազգեն Բախշյան**
- 6-7. Ամսաթիվ** 2011 թ. ապրիլի 29-ին
Վայր ԼՂՀ և Ադրբեջանի բաժանարար գծում
Ձոռ 2 զինծառայող, որոնց անունները հայտնի չեն
- 8. Ամսաթիվ** 2011 թ. հոկտեմբերի 5-ին
Վայր ԼՂՀ և Ադրբեջանի բաժանարար գծում



Ձոռ	Չինժառայող Յուրի Սարգսյան
9. Ամսաթիվ	2011 թ. նոյեմբերի 19-ին
Վայր	ԼՂՀ սահմանային զորամասերից մեկում
Ձոռ	Ժամկետային զինժառայող Արեն Սիմոնյան ¹⁷
10. Ամսաթիվ	2011 թ. նոյեմբերի 20-ին
Վայր	հարավարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում
Ձոռ	Ժամկետային զինժառայող Միհրան Մարգարյան
11. Ակնարկ	2011 թ. մայիսի 11-ին ԼՂ և Ադրբեջանի բաժանարար գծում տրակտորով աշխատելիս հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացել էր Արայիկ Բալասանյանը: Ըստ համազյուղացիների՝ նա հանդիսանում էր պայմանագրային զինժառայող, իսկ ըստ ՀՀ ԱԳՆ-ի՝ քաղաքացիական անձ:

Վերոհիշյալ դեպքերի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ միայն նախորդ տարվա ընթացքում Ադրբեջանի Հանրապետության կողմից խախտվել է Հայաստանի Հանրապետության 11 քաղաքացիների կյանքի իրավունքը (նեգատիվ իմաստով, այն է՝ ակտիվ գործողությունների միջոցով), քանի որ պաշտոնեական հրադադարի պայմաններում Ադրբեջանի իշխանությունների «պատասխանատվության տակ» գտնվող զինվորականների կողմից սպանվել են իրենց քաղաքացիական պարտականությունը կատարող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, այնինչ վերջիններիս հարազատները, հաշվի առնելով սառեցված

¹⁷ Արեն Սիմոնյանին հետմահու տրվել է հերոսի կոչում:



հակամարտության պայմանները, չեն կարող հուսալ ո՛չ արդյունավետ քննության իրականացման, ո՛չ մեղավորների բացահայտման ու համարժեք պատժի նշանակման և ո՛չ էլ արդարացի փոխհատուցման տրամադրման հանրահայտ սկզբունքների ապահովմանը: Սակայն տվյալ պարագայում վերոհիշյալ 11 անձանց կյանքի իրավունքի խախտման համար պատասխանատու է ոչ միայն Ադրբեջանի Հանրապետությունը, այլ նաև Հայաստանի Հանրապետությունը, քանի որ խաղաղ պայմաններում կազմակերպելով պարտադիր զինվորական ծառայություն՝ պետությունը պարտավոր է երաշխավորել զինվորականների անվտանգությունը:

Բ. Կանոնագրքային կանոնների խախտման հետևանքով մահվան դեպքեր

1. ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է «կանոնագրքային կանոններ» հասկացությունը, որը շարադրված է հետևյալ կերպ. «Չինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով»: Այս հանցագործության կատարման համար նախատեսվում է պատիժ՝ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝ 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ, 2) մի խումբ անձանց կողմից, 3) զենք կամ մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով, 4) անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ մեկից երեք տարի ժամկետով,



կամ ազատագրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ, պատժվում է ազատագրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում՝ պատժվում է ազատագրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2011 թվականի ընթացքում գրանցված կանոնագրքային կանոնների խախտման արդյունքում արձանագրվել է ընդհանուր թվով 5 մահ.

1. 2011 թ. փետրվարի 6-ին ԼՂՀ Հադրութի շրջանի Դաշկեստան (կամ Արա լեռ) բնակավայրում գտնվող զինվորական մասում արտակարգ միջադեպի հետևանքով մահացել է շարքային զինծառայող Գևորգ Կոծինյանը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով¹⁸, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 14-րդ կետերով¹⁹: Գևորգ Կոծինյանի հարազատները պնդում են, որ դեպքի առթիվ գործ պիտի հարուցվեր սպանության հատկանիշներով:

2. 2011 թ. հուլիսի 29-ին ԼՂՀ Հադրութի դիրքերից մեկում հերթափոխի ժամանակ ծնոտի տակ հասցված հրազենային կրակոցից մահացել է ժամկետային զինծառայող Էդուարդ Ալավերդյանը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական

¹⁸ Չինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով..., որը կատարվել է 2) մի խումբ անձանց կողմից:

¹⁹ Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը..., որը կատարվել է 6) մի խումբ անձանց կամ, կազմակերպված խմբի կողմից, 14) անզուտությամբ առաջացնելով տուժողի մահ:



օրենսգրքի 110 հոդվածի առաջին մասով²⁰: Էդուարդ Ալավերդյանի հայրը՝ Սեմյոն Ալավերդյանը, պնդում է, որ տեղի ունեցածը սպանություն է:

3. 2011 թ. օգոստոսի 26-ին Ստեփանակերտի զինվորական հոսպիտալում մահացել է ԼՂՀ «Եղնիկներ» զորամասի ժամկետային զինծառայող Աղասի Աբրահամյանը: Մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետի հատկանիշներով²¹: Սպային, ում անունը չի հաղորդվել, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով²²:

4. 2011 թ. սեպտեմբերի 7-ին ԼՂՀ Ասկերանի մարտական հենակետերից մեկում սպանվել է ժամկետային զինծառայող Հայկ Մկրտչյանը: Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով²³:

5. 2011 թ. հոկտեմբերի 9-ին ԼՂՀ Մարտակերտի զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում մահացել է Վլադիմիր Ասատրյանը: Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի առաջին մասով²⁴:

Հատկանշական է, որ բավական հաճախ, երբ նախաքննության մարմնի կողմից զինվորի մահվան փաստի առնչությամբ քրեական գործ է հարուցվում ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի հատկանիշներով, հարազատները պնդում են, որ հանցագոր-

²⁰ Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ծանապարհով անձին անուղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը:

²¹ Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է սուստի մահ:

²² Իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը:

²³ Չենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն առաջացրել է մարդու մահ:

²⁴ Չինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը՝ նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայությամբ, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություններով:



ծության որակումը սխալ է կատարվել՝ մատնանշելով, որ իրականում տեղի ունեցածն անհրաժեշտ է որակել որպես սպանություն, ինչը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածով: Արդյունքում, ըստ ծնողների, իրենց զավակներին «սպանողները», իսկ ըստ պաշտոնական վարկածի՝ «մահ պատճառողները» ստանում են անհամեմատ մեղմ պատիժ: Այսպես, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով..., որը կատարվել է մի խումբ անձանց կողմից զենք կամ մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ գործադրելով ... և առաջացրել է ծանր հետևանքներ (տվյալ պարագայում մահ)՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով: Իսկ սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը, պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

9. Դժբախտ պատահարներ

«Դժբախտ պատահարներ» հասկացության տակ հասկացվում է տրանսպորտային միջոցների խափանման կամ վթարման հետևանքով մահ պատճառելը: Այսպիսի դեպքեր 2011 թվականի ընթացքում գրանցվել են 5-ը:

1-2. 2011 թ. հուլիսի 22-ին Վայոց Ձորի Սերս գյուղի ճանապարհին զինծառայողներ տեղափոխող ՀՀ ՊՆ «Ուրալ» մակնիշի մեքենան վթարի է ենթարկվել, որի հետևանքով մահացել է 2 զինծառայող՝ մեքենայի վարորդ, պայմանագրային զինծառայող **Նորայր Հակոբյանը** և ժամկետային զինծառայող **Գեղամ Դավթյանը**:

3. 2011 թ. սեպտեմբերի 12-ին Երևանի Մյասնիկյան պողոտայի վրա տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով մահացել



Է Վահրամ Խաչատուրովը:

4. 2011 թ. սեպտեմբերի 27-ին Իրինդ-Կաթնաղբյուր գյուղի հատվածում տեղի է ունեցել ավտովթար, որի հետևանքով մահացել է ժամկետային զինծառայող 18-ամյա **Սերյոժա Մեքրոնյանը**:

5. 2011 թ. հոկտեմբերի 16-ին Երևան-Սևան ավտոճանապարհին տեղի ունեցած ավտովթարից մահացել է ժամկետային զինծառայող **Էդմոն Ալեքսանյանը**:

1. ԱՎԼԱՐԿ

2011 թվականի ապրիլի 6-ին Կապան-Շվանի-ձոր-Մեղրի ավտոճանապարհի հատվածում ՌԴ սահմանապահ զորքերի պայմանագրային զինծառայող Արամ Թարվերոյանն իր անձնական օգտագործման մեքենայով գլորվել է ճորը, որի հետևանքով տեղում մահացել է:

Նման դեպքերի կապակցությամբ զանգվածային լրատվության միջոցներով որևէ տեղեկատվություն չի տարածվել փաստի առթիվ քրեական գործի հարուցման վերաբերյալ այն անձանց նկատմամբ, ովքեր ՀՀ զինված ուժերում պատասխանատվություն են կրում ՀՀ զինվորականների կողմից ծառայության ընթացքում շահագործվող տրանսպորտային միջոցների սարքինության համար: Այնինչ, նման նախադեպը լավ «հիշեցում» կլիներ ՀՀ պաշտոնատար անձանց համար այն մասին, որ վերջիններս են պատասխանատվություն կրում զինվորական ծառայության ժամանակ զինծառայողների անվտանգության ապահովման համար, ինչի մի մասն է, բնականաբար, կազմում շահագործվող տրանսպորտային միջոցների սարքինության երաշխավորումն ու վերահսկողությունը:

Դ. Անվտանգության կանոնների խախտման արդյունքում մահվան դեպքեր

1. 2011 թ. հուլիսի 15-ին Խաչատուր Թադևոսյանը մարտական հենակետում խախտել է գենքի հետ վարվելու կարգն ու անգուշությամբ վնասել համաժառայակից 19-ամյա **Կոյլա Մեսրոպյա-**



նին: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ և Խ. Թադևոսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդ. 3-րդ մասով²⁵:

2. 2011 թ. հոկտեմբերի 4-ին «Բաղրամյան» ուսումնական կենտրոնում ճամբարային հավաքների մեջ գտնվող ՊՆ պատկանող մեքենաներից մեկը զորավարժանքի տարածքում երթևեկելիս վթարի է ենթարկվել: Վթարի հետևանքով վնասվածքներ են ստացել 5 ժամկետային զինծառայողներ, իսկ մեկը՝ ժամկետային զինծառայող, ավագ **Հայկ Դավթյանը**, մահացել է:

3. 2011 թ. հոկտեմբերի 25-ին ճամբարային հավաքներից զորամաս վերադառնալիս Կապան-Գորիս ճանապարհին ՀՀ ՊՆ զինվորական զորահամեքենան դուրս է եկել երթևեկելի գոտուց, շրջվել և գլորվել դեպի ներքևի ճանապարհահատված: Վթարի հետևանքով մահացել է զրահամեքենայի ավագ, ավագ լեյտենանտ 28-ամյա **Արամայիս Սարգսյանը**: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով²⁶:

Ե. Անհայտ պայմաններում մահվան դեպքեր

2011 թ. հուլիսի 15-ին չպարզված հանգամանքներում գոհվել է ԼԴՀ Մարտունու զինկոմիսարիատից զորակոչված, 1977 թվականին ծնված Անդրեյ Հարությունյանը: Տվյալ դեպքի առնչությամբ որևէ պաշտոնական տեղեկատվություն չի տարածվել:

Առանձնակի ուշադրության է արժանի այս գործը, քանի որ վերջինիս վերաբերյալ որևէ տեղեկատվություն ո՛չ պաշտոնական աղբյուրներից և ո՛չ էլ ՉԼՄ-ների միջոցով չի տարածվել: Այսինքն, սույն դեպքի առնչությամբ ոչ միայն հայտնի չէ՝ տվյալ անձին ինչ հանգամանքներում է մահ պատճառվել, այլ նաև՝ թե արդյոք հարուցվել է քրեական գործ: Այնինչ, նմանատիպ հանրային կարևոր

²⁵ Չենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը:

²⁶ Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզուգույնությամբ առաջացրել է մահ:



րություն ունեցող դեպքի առնչությամբ, երբ խոսքը վերաբերում է կյանքի իրավունքին, պետությունը ուղղակի պարտավոր է թափանցիկության ապահովման տեսանկյունից հանրությանը տեղեկացնելու տվյալ դեպքի առնչությամբ իրականացվող քննության ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

2. Ինքնասպանություն

Ստորև բերված բոլոր դեպքերի առնչությամբ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ «Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը»:

2011 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում գրանցվել է ինքնասպանության 10 դեպք:

1. 2011 թ. փետրվարի 12-ին Ստեփանակերտի զորամասերից մեկում հրազենի գործադրումից մահացել է ժամկետային զինծառայող **Թորգոմ Սարուխանյանը**: Սարուխանյանի մայրը պնդում է, որ որդուն սպանել են քնած ժամանակ:

2. 2011 թ. ապրիլի 21-ին Բալախովիտ գյուղի մոտ գտնվող զորամասում մահացել է ժամկետային զինծառայող **Արթուր Ղազարյանը**: Արթուր Ղազարյանի հարազատները չեն հավատում, որ նա կարող էր ինքնասպանություն գործել, քանի որ ոչ մի պատճառ չունեն այդ քայլին դիմելու համար:

3. 2011 թ. հունիսի 26-ին Սյունիքի մարզի Ազարակի տարածաշրջանի Մարզիի զորամասում մահացել է **ժամկետային զինծառայողը** (անունը չի նշվում) ժայռից ընկնելու միջոցով: Ըստ հարազատների՝ նրան սպանել են:

4. 2011 թ. հունիսի 29-ին ՀՀ ՊՆ Ղափանի զորամասին հարակից անտառում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող **Տիգրան Համբարձումյանի** դին՝ դեմքի և պարանոցի փափուկ հյուսվածքների բացակայությամբ: Տիգրանի հայրը՝ Բենիկ Համբարձում-



յանը, պնդում է, որ որդուն սպանել են:

5. 2011 թ. օգոստոսի 19-ին ճամբարային հավաքների ժամանակ, ստանալով հրազենային մահացու վնասվածք գլխի շրջանում՝ մահացել է ժամկետային զինծառայող **Վարդան Սևյանը**: Հարազատները պնդում են, որ Վարդանը չէր կարող ինքնասպան լինել, այլ նրան սպանել են:

6. 2011 թ. օգոստոսի 29-ին Արաբկիր վարչական շրջանի «Մալականի այգի» կոչվող տարածքում երակները կտրված, անգիտակից վիճակում հայտնաբերվել է Արարատի զորամասերից մեկի ժամկետային զինծառայող 19-ամյա **Արթուր Գրիգորյանը**:

7. 2011 թ. հոկտեմբերի 12-ին ԼՂՀ Մատաղիսի զորամասի մարտական դիրքում հերթապահություն իրականացնելու ժամանակ մահացել է ժամկետային զինծառայող, 19-ամյա **Յուրիկ Ներսիսյանը**:

8. 2011 թ. հոկտեմբերի 13-ին ժամկետային զինծառայող, 21-ամյա շարքային **Արամ Մելքոնյանը** որովայնի շրջանում ստացած հրազենային վնասվածքից մահացել է:

9. 2011 թ. դեկտեմբերի 2-ին Վանաձորի «Դուց»-ի զորամասում մահացել է ժամկետային զինծառայող **Նարեկ Դավթյանը**: Հարազատները չեն հավատում զինվորի ինքնասպանության վարկածին:

Հատկանշական է, որ նման իրավիճակներում, տուժողների իրավահաջորդները, որպես կանոն, համաձայն չեն լինում պաշտոնեական վարկածի և քրեադատավարական որակման հետ՝ պնդելով, որ իրենց հարազատները ոչ թե ինքնասպան են եղել, ինչի համար նրանք հիմքեր և պատճառներ չեն ունեցել, այլ նրանց կանխամտածված սպանել են, հետևաբար քրեական գործեր պետք է հարուցվեն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ սպանության հատկանիշներով:

Տվյալ պարագայում, ուշագրավ է նաև ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի ներկայացրած տեսակետը. վերջինս 2011 թվականի հոկտեմբերի 17-ին պատասխանելով Հրապարակ



թերթի լրագրողի հարցին, թե. «- Մարդիկ չեն վստահում ՊՆ-ից պաշտոնապես «ինքնասպանություն» ձեւակերպումներին, ասում են, որ ի սկզբանե ինքնասպանություն եք որակում՝ բանակում տիրող վիճակը կոծկելու նպատակով», ասել է. «...Եթե ես տեսնում եմ դեպքի վայրում զենք է դրված՝ իրան կրակած, ես ինչ պետք է էդտեղ հարուցեմ, ինքն առաջարկում է սպանություն, ես էնտեղ մարդ չեմ տեսնում, միայն զենք եմ տեսնում ու մահացած մեկին, ես ինչ պետք է անեմ, ես ֆիքսում եմ դա, քննություն եմ կատարում, դառնում է ինքնասպանության հասցնել, դառնում է հետո սպանություն: Եթե ես հիմա ընդհակառակն անեմ, ոնց որ ընտրակեղծիքն է ասում, եթե ես հարուցեմ սպանություն, կես ժամ հետո տեսնեմ ինքնասպանություն է, դուք ինձ կմեղադրեք, թե ինձ կաշառեցին, ու սպանությունը դարձավ ինքնասպանություն»²⁷: Դեռ ավելին, նույն հարցազրույցի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարն անուղղակի փաստում է, որ մինչ այդ ՀՀ պաշտպանության նախարարությունը, տեղյակ լինելով սպայական կազմի մեղավորության մասին բանակում կատարվող սպանությունների վերաբերյալ, ձեռք չի առել համարժեք միջոցառումներ մեղավորներին պատժելու համար: Այսպես. «Մենք ես տարվա սկզբից առաջ քաշեցինք 0 հանդուրժողականության քաղաքականություն:

Խնդիրը կայանում է նրանում, ասեմ՝ չարդարացված գթասրտություն էինք ցուցաբերում եւ մեծ շրջանակ դատի չէինք տալիս: Այսինքն, մենք գտնում էինք, որ, բացի գլխավոր մասնակիցներից, մյուսներին այլ վարչական ներգործություն կիրառենք, իսկ հիմա խստացրել ենք: Եթե նախկինում գործով անցնում էր մի սպա, որը, 50 մ հեռավորության վրա արեւածաղիկ ուտելով, անցնում էր ու նայում էր, բայց ուշադրություն չէր դարձնում, չնայած կռիվ էր տեսնում՝ մտածելով, որ իր վաշտն ու գումարտակը չեն՝ չխառնվի դրան, այ հիմա մենք կանչում ենք այ էդ տիպիներին պատասխանատվության, որ բանակում բոլորը բոլորի համար պատասխանատու են»²⁸:

Պաշտոնատար անձի նման դիրքորոշումը և «ինքնախոս-

²⁷ <http://www.hrparak.am/2011/10/17/ov-aryun-klapi/>

²⁸ Տե՛ս նույն տեղում:



տովանությունը» խոսում է ակնհայտ կանխակալ և ոչ օբյեկտիվ քննության իրականացման վերաբերյալ, ինչի պարագայում կարելի է փաստել Հայաստանի Հանրապետության կողմից կյանքի իրավունքի ապահովման պոզիտիվ պարտականության խախտման մասին:

Է. Առողջական խնդիրների պատճառով մահվան դեպքեր

Առողջական խնդիրների պատճառով 2011 թվականի ընթացքում գրանցվել է 2 մահ:

1. 2011 թ. հոկտեմբերի 29-ին ԼՂՀ Հաղործի շրջանի զորամասերից մեկի տարածքում գտել են 19-ամյա Արմեն Մողրովյանի դիակը: Պաշտպանության նախարարության պաշտոնական վարկածով զինվորը հանկարծամահ է եղել և կատարված դիախերձման արդյունքում պարզվել է, որ մահը վրա է հասել սրտի պսակաձև անոթների շրջանառության սուր խանգարման հետևանքով: Ըստ պաշտպանության նախարարության լրատվական ծառայության պնդման, զինվորի դիակի վրա բռնության որևէ հետք չի հայտնաբերվել:

2. 2011 թ. դեկտեմբերի 15-ին ծայրահեղ ծանր վիճակում «Արմենիա» բժշկական կենտրոն է ընդունվել և գիտակցության չգալով՝ մահացել է շարքային Միեր Հակոբյանը՝ «կոմատոզ վիճակ, ուղեղի արյան զեղում» ախտորոշմամբ: Միեր Հակոբյանը գտնվել է գործուղման մեջ՝ ՀՀ բռնցքամարտի ֆեդերացիայի՝ 2012 թ-ի հունվարին կայանալիք մեծահասակների բռնցքամարտի առաջնությանը մասնակցելու նպատակով:

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ տվյալ դեպքում բացակայում է պետության «մեղավորությունը» իր «պատասխանատվության տակ» գտնվող զինվորի մահվան դեպքում, սակայն խորքային վերլուծության դեպքում հստակ է դառնում, որ խնդրահարույց են կան բժշկական զննության արդյունքները, որոնց հիման վրա զորակոչված երիտասարդները համարվել են առողջ և ծառայության համար պիտանի, իսկ ամիսներ անց բա-



նակում մահացել են որպես կանոն սիրտ-անոթային հիվանդություններից, կա՛մ ոչ պատշաճ բժշկական օգնությունը, որ ժամանակին կամ որակյալ չի ցուցաբերվել դրա կարիքն ունեցող զինծառայողներին: Այնուամենայնիվ, դեպքերից և ոչ մեկով քրեական գործ չի հարուցվել և վերոհիշյալ հարցերին, այն է՝ տվյալ առողջական խնդիրները, որոնք դարձել են երիտասարդների մահվան պատճառը եղել են մինչև բանակ զորակոչվելը, թե ձեռք են բերվել ծառայության ընթացքում, եթե եղել են մինչև զորակոչ, ապա ինչպես են այդ տղաները համարվել ծառայության համար պիտանի, իսկ եթե ձեռք են բերվել ծառայության ընթացքում, ապա որոնք են եղել այդ հիվանդությունները ծնող պատճառները:



Ը. Կանխամտածված սպանություն

Միակ դեպքը 2011 թվականի ընթացքում, որը որակվել է որպես դիտավորյալ սպանություն տեղի է ունեցել 2011 թվականի հուլիսի 26-ին՝ գիշերվա մոտավորապես ժամը 1:40-ի սահմաններում, երբ Վահե Դերձյանը իրեն ամրակցված զենքից կրակահերթ է արձակել մարտական դիրքի հողաթմբի մոտ՝ առջևի մասում գտնվող մարդու վրա, ով տեղում մահացել է: Մահացողը եղել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Ալիկ Աբրահամյանը: Ըստ Դերձյանի՝ ինքը կրակել է՝ կարծելով, թե այնտեղ թշնամի է, սակայն ըստ զինակիցների Վահեին զգուշացրել էին, որ այնտեղ Ալիկն է գտնվում: Դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-ի 1-ին²⁹, 359-ի 3-րդ³⁰, 104-ի 1-ին³¹ և 358 հոդվածի 1-ին մասերով³²:

5.2. Քրեական գործերով մասնակցություն նախաֆնությանը կամ դատաֆնությանը

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, նպատակ ունենալով ոչ միայն դիտարկել առկա իրավիճակը կյանքի իրավունքի ապահովման բնագավառում, այլ նաև իրականացնել տուժողների իրավահաջորդների իրավունքների և շահերի գործնական պաշտպանություն, ռազմավարական նշա-

²⁹ Չինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրոծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով՝ պատժվում է կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

³⁰ Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որն առաջացրել է ծանր հետևանքներ, պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

³¹ Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:

³² Չինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործ դրելը՝ պատժվում է կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:



նակության գործերի վարումը պատվիրելով կազմակերպության գործընկեր փաստաբաններին, փաստացիորեն ոչ միայն ակտիվ քաղաքացիական վերահսկողություն է իրականացրել ընտրված գործերի նախաքննության և դատաքննության նկատմամբ, այլ նաև տուժողների իրավահաջորդներին տրամադրել է որակյալ իրավական աջակցություն:

Ռազմավարական նշանակության գործեր հասկացության տակ կազմակերպությունը հասկանում է այնպիսի գործեր, որոնց նախադեպերը կարող են կիրառելի լինել մեծ թվով նմանատիպ այլ գործերի համար և տվյալ գործի շրջանակներում հնարավոր է համակարգային կամ ինստիտուցիոնալ փոփոխության հասնել իրավական ակտերի փոփոխման կամ առկա օրենքների կիրառման և մեկնաբանության միջոցով:

Ստորև ներկայացված են երկու գործեր, որոնք «Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը պատվիրել է վարել ՀՀ փաստաբանների պալատի անդամներ, փաստաբաններ Էդմոն Մարությանին և Կարեն Թումանյանին: Վերջիններս Գ. Կոծինյանի գործով ներգրավվել են միայն դատաքննության փուլում, իսկ Կ. Այվազյանի գործով՝ նախաքննության փուլից:

5.2.1. Գևորգ Կոծինյան

Գործի նախապատմությունը



2011 թվականի փետրվարի 6-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի տարածքում տեղակայված զինվորական մասում արտակարգ միջադեպի հետևանքով մահացել էր ժամկետային զին-
ծառայող Գևորգ Կոծինյանը: Գ. Կոծինյանի դին հարազատների հանձնվել էր փետրվարի 8-ի երեկոյան: Սկզբում երիտասարդի



մահվան մասին հայտնել էին զինկոմիսարիատից և որպես պատճառ ներկայացրել՝ իբր նա ինսուլտ կամ ինֆարկտ էր ստացել: Գ. Կոծինյանի մորեղբայրը, ով ներկա էր եղել դիակեթեմանը, ՀԲԱ Վանածորի գրասենյակի ներկայացուցչին հայտնել էր, որ դիակեթեման ժամանակ Գ. Կոծինյանի վրա հայտնաբերվել էին տարբեր բնույթի վնասվածքներ:

Հարազատներին ներկայացված մահվան փաստը հավաստող բժշկական վկայականում որպես մահվան պատճառ նշված էր սրտի ռեֆլեկտոր կանգ, սակայն արձանագրված էին նաև հետևյալ վնասվածքները՝ կրծքավանդակի փափուկ հյուսվածքների, ձախ թոքի, սրտի արյունազեղումներ, աջ անրակի հողախախտ, աջից գոտկային շրջանի փափուկ հյուսվածքների, աջ երիկամի և մակերիկամի արյունազեղումներ: Ըստ մորեղբոր՝ դիակեթեման ժամանակ բժիշկը պատասխանել էր իր բոլոր հարցերին վնասվածքների առաջացման պատճառների վերաբերյալ, և եզրակացությունը միանշանակ էր, որ Գ. Կոծինյանը ենթարկվել է դաժան ծեծի:

Հետագայում տարածված տեղեկատվության համաձայն չորս զինծառայողներ, լինելով ակոհոլի ազդեցության տակ, Գ. Կոծինյանին ծխելու և իրենց հետ բարբառով խոսելու համար ենթարկել էին ծեծի:

Լախաբնություն

Հարուցված քրեական գործի շրջանակներում շարքայիներ Տարոն Սուվարյանի և Վահե Աղաջանյանի նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ «զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից», ինչպես նաև 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ և 14-րդ կետերով՝ «դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով՝ անզգուշությամբ առաջացնելով



տուժողի մահը»:

Կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանի նկատմամբ մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, նաև 38-359 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝ նշված հանցագործությանը օժանդակելը, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ, 14-րդ կետերով և 375 հոդվածի 1-ին մասով՝ «իշխանության չարաշահումը և իշխանության անգործությունը»:

Ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանին մեղադրանք էր առաջադրվել 375 հոդվածի 1-ին մասով:

Ինչպես երևում է վերևում բերված հոդվածների բովանդակությունից, այս դեպքը որակվել է որպես «Կանոնադրային կանոնների խախտման հետևանքով մահվան դեպք»:

Սույն գործով նախաքննության իրականացման ընթացքից Գևորգ Կոծինյանի ընտանիքը անտեղյակ և անիրագրելի է մնացել: Նախաքննություն իրականացնող մարմինը իրավահաջորդին չի տրամադրել այն բոլոր որոշումների պատճենները, որոնք կայացվել են, այդ թվում՝ քրեական գործի հարուցման, մեղադրյալներ ներգրավելու մասին որոշումների, նաև քննչական մարմնի եզրակացությունները, ինչը պարտավոր էր անել³³: Ինչի արդյունքում, տուժողի իրավահաջորդները փաստացիորեն նախաքննության իրականացման ընթացքում զրկված են եղել արդյունավետ պաշտպանության իրենց իրավունքի իրականացման հնարավորությունից:

Կոծինյանի ընտանիքի անդամները, համաձայն չլինելով նախաքննության ընթացքում մեղադրանք առաջադրված հոդվածների հետ, համարում են, որ «մարդասպանների» համար մեղմ հոդվածներ են «դրվել», իսկ նախաքննությունն էլ ծիշտ ուղու վրա չէ, քանի որ մեղադրվողներին մեղադրանքը չի առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, այն է՝ սպանության հատկանիշներով:

³³ <http://aravot.am/am/articles/rights/91284/view>



Առաջին ատյանի դատարանի որոշում

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանը, Ստեփանակերտի նստավայրում կայացնելով ժամկետային զինծառայող Գևորգ Կոծինյանի մահվան մեջ մեղադրվող զինծառայողների դատավճիռը, կրտսեր սերժանտ Մարգար Դավթյանին մեղավոր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 38-359 հոդվածի 3-րդ մասով, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ, 14-րդ կետերով և 375 հոդվածի առաջին մասով՝ «իշխանության չարաշահումը և իշխանության անգործությունը»՝ նրան ազատազրկման դատապարտելով 11 տարի 6 ամիս ժամանակով:

Դատարանը շարքայիներ Տարոն Սուվարյանին և Վահե Աղաջանյանին մեղավոր էր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 3-րդ մասով, 112 հոդվածի 2-րդ մասի 6-րդ, 9-րդ և 14-րդ կետերով՝ «դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից խուլիգանական դրդումներով՝ անզուգուրությամբ առաջացնելով տուժողի մահը»՝ դատապարտելով ազատազրկման 11 տարի ժամանակով:

Իսկ ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանին, մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով, դատապարտել էր ազատազրկման 3 տարի ժամանակով և, կիրառելով ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման 1-ին կետի 1-ին ենթակետը, ազատել պատժի կրումից՝ ազատ արձակելով դատարանի դահլիճից³⁴:

Վերաքննիչ դատարանի որոշումը

Չորս ծառայակիցների կողմից ծեծվելու հետևանքով մահացած զինծառայող Գևորգ Կոծինյանի իրավահաջորդի ներկայացուցիչներ, փաստաբաններ Էդմոն Մարությանը և Կարեն Թումանյանը վերաքննիչ բողոքով պահանջել էին դատարանից ճանաչել Գևորգ Կոծինյանի կյանքի իրավունքի խախտման փաստը, քանի որ գտնում էին, որ կատարված սպանության համար պատասխա-

³⁴ <http://www.aravot.am/2011/12/01/13010/>



նատու է նաև պետությունը: Փաստաբանները պնդում էին, որ եթե պետության ներքո գործող կազմակերպության՝ ի դեմս պաշտպանության նախարարության, ենթակայության տակ գտնվող մարդ է մահացել, անկախ նրանից, թե հանցագործներն ովքեր են, պետությունն ինքը պատասխանատու է: Փաստաբանները, նման պահանջ դնելով, նպատակ էին հետապնդում հաջորդ քայլով դատարանի կողմից Գ. Կոծինյանի կյանքի իրավունքը խախտած զինծառայողներից պահանջել նյութական փոխհատուցում՝ 2 մլն դրամի չափով, իսկ պետությունից բարոյական վնասի փոխհատուցում՝ 5 մլն դրամի չափով: Փաստաբանները նաև նշում էին, որ քաջատեղյակ լինելով, որ ՀՀ օրենսդրությունը բարոյական վնասի փոխհատուցում չի սահմանում, այդ հարցը բարձրացրել էին որպես ռազմավարական նպատակ, քանի որ նման հայցով դատարան դիմելը կարող է նախադեպ ստեղծել՝ մեր երկրում օրենքի այդ բացը լրացնելու անհրաժեշտությունը ընդգծելու համար: Վերաքննիչ դատարանը մերժել է վերաքննիչ բողոքը³⁵: Հետագա զարգացումները, մասնավորապես, Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի գործով եվրոպական դատարանի 12/06/2012 թ. վճիռը, ցույց տվեց, որ փաստաբանների ներկայացրած պահանջները հիմնավոր էին և իրավաչափ:

Վճռաբեկ դատարանի որոշումը

2012 թ. մայիսի 17-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել՝ վերադարձնել զինծառայող Գևորգ Կոծինյանի մահվան գործով բերված վճռաբեկ բողոքը:

Ակնարկ

Ներկայումս գործը նախապատրաստվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկելու համար:

³⁵ http://1in.am/arm/armenia_right_70462.html



Գործի վերլուծություն

Սույն գործով հասկանալու համար, թե արդյոք կյանքի իրավունքի խախտում տեղի ունեցել է, թե ոչ, անհրաժեշտ է այն վերլուծել ՄԻԵԴ նախադեպային իրավունքի լույսի ներքո՝ ներկայացված սույն ձեռնարկի կետ 2-ում:

Տվյալ դեպքում խոսքը գնում է պետության պոզիտիվ պարտավորության իրականացման թերացման մասին, այն է՝ պետության պարտավորությունը՝ բոլոր միջոցներով ապահովել և պաշտպանել մարդու կյանքի իրավունքը:

«Սահմանադրությամբ նախատեսված է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է մասնակցել երկրի պաշտպանությանը: Հայաստանում այն հիմնականում դրսևորվում է զինապարտության մեջ: Այս դեպքում յուրաքանչյուր քաղաքացի, մասնակցելով երկրի պաշտպանությանը, կանխատեսում է, որ կարող է հակառակորդի կողմից իրականացված գործողության արդյունքում իր կյանքը դադարի: Հակառակ դրան, քաղաքացին պետք է ակնկալի, որ ինքն իր պարտականությունը պետության առջև կատարելիս պետական մարմնի անգործության կամ գործողության արդյունքում իր կյանքին կամ առողջությանը վտանգ չպետք է սպառնա: Իսկ նման սպառնալիքի կամ ազդեցության արդյունքում մարդու կյանքից կամ առողջությունից զրկվելու դեպքում պետությունը պետք է կատարի իր պարտականությունը, որը պետք է դրսևորվի դեպքի արդարացի և արդյունավետ քննությամբ:

Համաձայն ՄԻԵԴ տրամաբանության, մասնավորապես այն բոլոր դեպքերում, երբ տեղի է ունենում պետության «պատասխանատվության տակ» գտնվող անձի մահ, պետությունը պարտավորություն է կրում.

իրականացնել արդյունավետ քննություն և բացահայտել մեղավորներին,

ապահովել նրանց դատապարտումը և երաշխավորել համարժեք պատժի նշանակումը,

տուժած անձանց կամ նրա անմիջական հարազատներին



արդարացի փոխհատուցում տրամադրել:

Տվյալ պարագայում Գևորգ Կոծինյանի հարազատները պնդում են, որ սույն գործով քննության արդյունավետության մասին անգամ խոսելն անիմաստ է, քանի որ ի սկզբանե տվյալ հանցագործությունը սխալ է որակվել:

«Ընտանիքի անդամները համաձայն չեն վերոնշյալ հողվածների հետ, համարում են, որ «մարդասպանների» համար մեղմ հողվածներ են «դրել»: «Նախաքննությունը ճիշտ ուղու վրա չէ, 104-րդ հողվածը պիտի դնեին: Ո՛նց ա լինում մտածված սպանությունը: Եթե ջարդում են, ամբողջ օրգանիզմում մի նորմալ օրգան չի մնում, էլ ո՛րն ա: Անփութությունը էն կլիներ, որ, ասենք, 2 անգամ խփեին, ընկներ, ոտքը կոտրեր կամ գլուխը ձղվեր: Բայց տրամադրված դրել են ոտի տակ՝ ջարդել, մինչև որ մահանա: Չեն հանգստացել, վերջին անգամ էլ, որ երեխեն վազել ա, որ շունչ քաշի, Մարգար Դավթյանը չի հանգստացել, հետևից ոտով էլի խփել ա, երեխու ուշքը գնացել ա, ընկել ա ու էլ վեր չի կացել: Պարտադիր պիտի դանակով խփեին, որ դիտավորյալ սպանություն լիներ: Նրան էն աստիճանի են ծեծել, որ էլ արյունը վերև չի բարձրացել: Մտածված ծեծել են, մինչև որ մահանա», - պատմում է Գևորգ Կոծինյանի իրավահաջորդը՝ մորեղբայր Բորիս Ադամյանը,³⁶ «Առավոտ» թերթի լրագրողի հետ հարցազրույցում:

Դեռ ավելին, Գևորգ Կոծինյանի հարազատներին նախաքննության մարմինը, գործով նախաքննությանը մասնակից չդարձնելով և բացի դիակի դատաբժշկական փորձաքննությունից ոչինչ չտրամադրելով, փաստացի, անհնարին է դարձրել վերջիններիս կողմից քննության բազմակողմանիության և արդյունավետության մեջ համոզվելու հնարավորությունը:

Սույն գործով մտահոգիչ է նաև տուժողի իրավահաջորդին արդարացի փոխհատուցման տրամադրման հարցը, քանի որ դատարանը, կայացնելով վերոհիշյալ քրեական գործով վերջնական դատավճիռ, որևէ կերպ չի էլ անդարդարձել տուժողի իրա-

³⁶ <http://aravot.am/am/articles/rights/91284/view>



վահաջորդի ներկայացուցիչների կողմից ներկայացված քաղաքացիական հայցին՝ արդարացի փոխհատուցման տրամադրման պահանջի մասով:

Դեռ ավելին, ինչպես նշված է վերևում, ՄԻԵԴ վերահսկողության շրջանակների մեջ է մտնում ոչ միայն քրեական գործի հարուցման հանգամանքը կամ քրեական վարույթի իրականացման եղանակները, այլ նաև պատժի նշանակման և կատարման տիրույթները: Ըստ Եվրոպական դատարանի, *«Եթե պետության գործակալը մեղադրվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածը խախտող հանցագործության կատարման մեջ, ապա ... չպետք է թույլատրվի նման անձանց նկատմամբ կիրառել ներում կամ համաներում»*³⁷: Նույն մոտեցումը վերաբերում է նաև այնպիսի միջոցներին, ինչպիսին են պատիժը ժամանակավորապես չկիրառելու, փորձաշրջան կիրառելու և պայմանական վաղաժամկետ ազատ արձակելու միջոցները³⁸: Նշվածը հավասարապես վերաբերում է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի շրջանակների մեջ մտնող գործերին: Սակայն ավագ լեյտենանտ Արմեն Ռաֆայելյանին, մեղավոր ճանաչելով առաջադրված մեղադրանքում և դատապարտելով ազատազրկման 3 տարի ժամանակով, կիրառել է ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված համաներման 1-ին կետի 1-ին ենթակետը և ազատել պատժի կրումից՝ ազատ արձակելով դատարանի դահլիճից:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունն ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ հատուկ քննչական ծառայության, այնուհետև նաև Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների՝ Գևորգ Կոծինյանի սպանության փաստի վերաբերյալ չիրականացնելով օբյեկտիվ, բազմակողմանի և արդյունավետ քննություն՝ խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պետության պոզիտիվ

³⁷ Օկային ընդդեմ Թուրքիայի, թիվ 52067/99, 17/10/2006, § 76:

³⁸ Օկայի, § 36, 74:



պարտավորությունը, քանի որ պետության «հոգածության» ներքո գտնվող անձի մահվան կապակցությամբ ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում: Միևնույն ժամանակ, դատական ատյանը, կիրառելով համաներում և որևէ կերպ չանդրադառնալով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչների կողմից պահանջվող արդարացի փոխհատուցման պահանջին, շարունակել է Եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով պետության պարտականությանների խախտումների ցանկը:

5.2.2. Կարո Այվազյան

Գործի նախապատմությունը



2010 թվականի հուլիսի 28-ին ԼՂ Մարտունու N զորամասում խորհրդավոր հանգամանքներում մահացել են ժամկետային զինծառայողներ Անդրանիկ Սարգսյանը, Ռոբերտ Հովհաննիսյանը, Կարո Այվազյանը, Գարեգին Հովսեփյանը, Արտեմ Մանասյանը և ավագ լեյտենանտ Վարդգես Թադևոսյանը: Նրանց մարմիններին հրազենային վնասվածքներ են հայտնաբերվել:

Ըստ պաշտոնական վարկածի՝ զինակիցներին սպանել և հետազայում ինքնասպան էր եղել Կարո Այվազյանը: Ըստ նախնական վարկածի, սպան՝ Վարդգես Թադևոսյանը (հենակետի պատասխանատուն) ու սերժանտը (դիրքի ավագը) մարտական դիրքում զինվորներից մեկին քնած լինելու պատճառով սկսել են վիրավորել և նվաստացնել, որին ի պատասխան՝ հերթապահող մյուս զինվորը՝ Կարո Այվազյանը, գնդակահարել է նվաստացնողներին,



այնուհետև կրակել ձայնի վրա իրենց մոտեցող 3 զինվորներին ու ինքնասպան եղել:

Սակայն զոհվածների հարազատները չեն հավատում այս վարկածին՝ պնդելով, որ հնարավոր չի, որ մի հոգի 5 անձի հասցնի սպանել ու ոչ ոք նրա վրա չկրակի:

Նախաքննություն

Սույն գործով նախաքննությունը³⁹ դեռևս ընթացքի մեջ է, ինչի վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չի տարածվում:

Փաստաբան Էդմոն Մարուքյանը սույն գործով փորձել է իրականացնել տուժողի՝ Կարո Այվազյանի իրավահաջորդի ներկայացուցչություն, սակայն դեպքի առնչությամբ քրեական գործի հարուցումից ի վեր, նախաքննության մարմինը, Կարո Այվազյանին չտալով քրեադատավարական որևէ կարգավիճակ (տրամաբանական է, որ ի սկզբանե Կարո Այվազյանին, ելնելով անմեղության կանխավարկածից, անհրաժեշտ էր տալ տուժողի կարգավիճակ, քանի դեռ նախաքննությամբ հավաքված չէին բավարար փաստեր վերջինիս մեղավորության մասին), նրա հարազատներին փաստացի զրկել է Կարո Այվազյանին ներկայացվող մեղադրանքից/կասկածներից պաշտպանելու իրավունքից:

Այնուամենայնիվ, միջադեպի օրվանից Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը սեփական հետաքննությունն է վարում գործով: Գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը մի շարք դիտարկումներ է արել, որոնք կասկածի տակ են դնում նախնական վարկածը Կարո Այվազյանի կատարած սպա-

³⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 197 հոդված. §2. Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: 6. Քննության ժամկետը երկարացնելու մասին պատճառաբանված որոշումը քննիչը պարտավոր է ներկայացնել դատախազին՝ քննության ժամկետը լրանալու օրվանից առնվազն 3 օր առաջ: 7. Քրեական գործի նախաքննությունը վերսկսելու, քրեական գործը լրացուցիչ քննության վերադարձնելու, ինչպես նաև կարճված գործի վարույթը նորոգելու դեպքերում նախաքննությունը պետք է ավարտվի մեկամսյա ժամկետում՝ համապատասխանաբար գործի նախաքննությունը վերսկսելու մասին որոշում կայացնելու, լրացուցիչ քննության վերադարձված քրեական գործը քննիչի կողմից ստանալու, գործի վարույթը նորոգելու մասին որոշում կայացնելու օրվանից սկսած: Այդ ժամկետի հետագա երկարացումը կարող է կատարվել սույն հոդվածի հինգերորդ մասով սահմանված կարգով»:



նության և ինքնասպանության մասին: Դրանցից առաջինն այն է, որ զոհվածների դիակների վրա, բացի հրազենային վնասվածքներից, այլ հետքեր էլ են եղել, որոնք կարող են վկայել բռնությունների մասին: Օրինակ, Գարեգին Հովսեփյանի աջ քունքի մոտ ուռուցք է եղել, ձեռքի մատները կոտրված են եղել: Այվազյան Կարոյի աջ երիկամի ուղղությամբ սևաձև հետք է հայտնաբերվել: Սաքունցը նաև փաստում է, որ հարազատներից ոմանք նույն ժամանակահատվածում կարողացել են զրուցել իրենց երեխաների հետ, իսկ ոմանց համար երեխաներն անհասանելի են եղել: «Այսինքն, իրենք մշտապես հեռախոսակապի մեջ են եղել, բայց, օրինակ, Գարեգին Հովսեփյանի ծնողներն իրենց որդու հետ 28-ի առավոտից սկսած՝ չեն կարողացել կապվել, իսկ, ասենք, Անդրանիկ Սարգսյանի մայրը իր հետ խոսել է 28-ի երեկոյան: Ինչպե՞ս են այդ դեպքում ասում, որ այդ զինծառայողները մի տեղ են եղել: Առանձին զրույցների ժամանակ քննիչները նկարագրել են, որ Կարո Այվազյանը մի «մագազին» փամփուշտը վերջացրել է, հետո մյուսը վերցրել, ապա ՌԴԿ-ով՝ «ручной пулемет калашникова», ինքն իրեն սպանել: Մինչդեռ ՌԴԿ-ն երկար փող ունի, և մարդը դրանով իրեն սպանելու համար պետք է ունենա 190 սմ-ից ոչ պակաս բոյ, իսկ Կարոյի բոյը մետր 65 սմ էր: Նախաքննության ժամանակ պետք է պարզվի նաև, թե ինչու են բոլոր մարմինները բերվել առանց հագուստի և շորերը պատշաճ ձևով չեն փաթեթավորվել ու ցույց տրվել ծնողներին՝ հանգամանք, որը կասկածներ է հարուցում նրանց շրջանում և անվստահություն ներշնչում հասարակությանը»⁴⁰:

Ի դեպ, իրավապաշտպանի մոտ հարց է ծագում, թե ինչ գործ է ունեցել այնտեղ գումարտակի հրամանատար Հովիկ Դանիելյանի վարորդ Ռոբերտ Հովհաննիսյանը. նա սպանվածների մեջ է. «Ռոբերտ Հովհաննիսյանը դիրքում ընդհանրապես անելիք չունի: Միայն կարող էր հրամանատարի հետ հայտնվել դիրքում, որը մահացածների մեջ չի եղել: Եթե անգամ առանց հրամանատարի է հայտնվել, ապա ո՞րն է եղել մոտիվացիան: Եթե հրամանատարի

⁴⁰ <http://www.hraparak.am/2010/09/08/pn-lrutyan-qarasunqe/>



հետ է եղել, գնդի հրամանատարը ինչո՞ւ է եկել»⁴¹:

Այսպիսով, կարելի է փաստել, որ քանի դեռ պատասխաններ չկան տրված այս և մի շարք այլ հարցերի առնչությամբ, նախաքննությունը չի կարող համարվել արդյունավետ և բազմակողմանի: Իսկ նախաքննությունն արդեն ընթանում է շուրջ 2 տարի, ինչը բացառիկ ժամկետ է:

Գործի վերլուծություն

Սույն գործով նախաքննությունը թեև դեռևս ընթացքի մեջ է, սակայն եթե արժանահավատ գտնվի նախաքննության կողմից առաջ քաշված այն վարկածը, որի համաձայն Կարո Այվազյանը կյանքից զրկել է 5 համաձայողներին և հետագայում էլ ինքնասպան է եղել, միանշանակ կարելի է փաստել Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով պոզիտիվ պարտականության կատարման թերացման մեջ: Սույն պնդումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

Կարո Այվազյանը 2 տարեկանից մոր հետ տեղափոխվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, հայերեն հազիվ էր խոսում, կարդալ և գրել չգիտեր, սակայն նրան զինկոմիսարիատում առանց տեղեկացնելու բովանդակության մասին ստորագրել են տվել մի փաստաթուղթ, որտեղ գրված է եղել՝ «ես կամավոր եմ մեկնում ԼՂ»:

Միացյալ Նահանգներում Կարո Այվազյանը դատվածություն է ունեցել անչափահաս տարիքում զենք պահելու և թմրամիջոցներ օգտագործելու, իսկ հետագայում էլ բանտից փախչելու համար, որի արդյուքում էլ դատարանը դատավճռով որոշել էր, որ Կարո Այվազյանն իրավունք չունի զենք կրելու: Սույն դատավճիռը բնականաբար պարտադիր բնույթ չի կրում Հայաստանի Հանրապետությունում, սակայն Կարոյի այդ «խնդիրների» մասին վերջինիս պապը՝ Զիվան Միքայելյանը, նամակ է գրել ՀՀ պաշտպանության նախա-

⁴¹ <http://www.a1plus.am/am/politics/2010/08/26/saqunc>



րարությանը՝ տեղեկացնելով, որ. «...եթե այս երեխայի հետ դեպք պատահի՝ էս մարդն ա մեղավոր (Արմեն Հակոբյանը, ում որոշման հիման վրա զորակոչվել էր Կարո Այվազյանը)»:

Կարո Այվազյանին ողջ նախաքննության ընթացքում որևէ կարգավիճակ, այն է տուժողի կամ կասկածյալի կարգավիճակ չի տրվել, որի արդյունքում վերջինիս հարազատները ամենևին անտեղյակ են նախաքննության ընթացքին և հնարավորություն չեն ունենում իրականացնել Կարո Այվազյանի արդյունավետ պաշտպանություն:

Վերևում՝ **«Ինքնասպանություն հոգեկան խանգարում ունեցող զինվորականի կողմից»** ենթավերնագրի ներքո, նշվում է, որ դատարանը այս կարգի հարցը քննում է նեգատիվ և պոզիտիվ պարտավորությունների լույսի ներքո՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

արդյոք իշխանությունները գիտեին կամ պետք է իմացած լինեին, որ առկա էր իրական վտանգ, որ զինվորը կարող էր վնասել ինքն իրեն և տվյալ պարագայում նաև այլոց,

եթե գիտեին, ապա արդյոք իշխանություններն արել են ամեն ինչ, որ ողջամտության սահմաններում պետք էր սպասել նրանցից, որպեսզի այդ ռիսկը վերացվեր:

Սույն գործով իշխանությունները քաջատեղյակ էին Կարո Այվազյանի նախկին դատվածությունների և նրա զենք կրելու արգելքի մասին Կարո Այվազյանի պապի կողմից հղված նամակից: Համապատասխան իրավասու մարմինների սույն հարցի վերաբերյալ տեղեկացվածությունը նաև հիմնավորվում է հետևյալ գրությամբ. «ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ Ս. Սեդրակյանը Արաբկիրի զինկոմիսարին այսպիսի գրությամբ տեղեկացրել է. «1989 թ. ծնված Կարո Ծուրիկի Այվազյանի զորակոչի վերաբերյալ որոշում կայացնելու համար նրա գործն ուղարկվել է ՀՀ զինվորական դատախազություն և ՀՀ զինվորական դատախազի թիվ 19/1123-09 պատասխան գրությամբ հայտնվել է, որ Կ. Այվազյանը, «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետ



տի համաձայն, ենթակա է զորակոչի: Քննարկելով ներկայացված փաստաթղթերը և հաշվի առնելով ՀՀ զինվորական դատախազի կարծիքը գործի վերաբերյալ՝ 20.11.2009 թ. ՀՀ պաշտպանության նախարարին է ներկայացվել թիվ 1423 զեկուցագիրը և որոշվել է նրան զորակոչել ՀՀ զինված ուժեր»: Սույն փաստաթղթին առդիր՝ անձնական գործը 20 թերթ է, կից փաստաթղթերը՝ 24 թերթ:» Այսպիսով, ՀՀ իշխանությունները, քաջատեղյակ լինելով Կարո Այվազյանի անձնական գործին, ոչ միայն որևէ միջոց չեն ձեռնարկել վերջինիս կողմից ինքնավնասման ռիսկը կանխելու համար, այլ նաև նրան վստահելով զենք՝ վտանգել են նրա հետ նույն զորամասում ծառայող բոլոր զինվորների կյանքը, որոնցից 5-ի համար այն եղել է մահվան ելքով:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ հատուկ քննչական ծառայության՝ Կարո Այվազյանի մահվան փաստի վերաբերյալ չիրականացնելով օբյեկտիվ, բազմակողմանի և արդյունավետ քննություն⁴², խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պետության պոզիտիվ պարտավորությունը, քանի որ բանակում իր քաղաքացիական պարտքը կատարող երիտասարդի մահվան դեպքում ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում: Նույն հոդվածի շրջանակներում իշխանությունները, իրազեկ լինելով Կարո Այվազյանի զենք կրելու իրավունքի սահմանափակումների և վերջինիս բնութագրի մասին, որևէ միջոցառում չեն ձեռնարկել հնարավոր վտանգների կանխման ուղղությամբ:


⁴² Թեև նախաքննությունը դեռևս ընթացքի մեջ է, սակայն արդեն իսկ թույլ տրված մի շարք խախտումների արդյունքում նախաքննությունը կարող է որակվել որպես ոչ օբյեկտիվ և ոչ արդյունավետ:



6. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՄԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

6.1. Իրավիճակի ներկայացում

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության ՀՀ քրեակատարողական հիմնարկներում քաղաքացիական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբի տվյալների՝ ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2009 թ. գրանցվել է 15 մահ, որից 10-ի պատճառը հիվանդությունն է, 2-ինը՝ դժբախտ պատահարները, իսկ 3-ինը՝ ինքնասպանությունը: 2010 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է 34 մահ, որից 29-ի պատճառը հանդիսացել է հիվանդությունը, 1-ինը՝ դժբախտ պատահարները, իսկ 4-ինը՝ ինքնասպանությունը: 2011 թվականի ընթացքում գրանցված մահերը եղել են 32-ը, որոնցից 26-ի պատճառը հանդիսացել է հիվանդությունը, իսկ 6-ինը՝ ինքնասպանությունը:





Տվյալ պարագայում առանձնահատկությունը կայանում է նրանում, որ քրեակատարողական հիմնարկները, քանի որ բավականին փակ հաստատություններ են, նրանց ներսում տեղի ունեցածի վերաբերյալ հանրային իրազեկվածության մակարդակը չափազանց ցածր է, իսկ տարիներ շարունակ ձևավորված կարծրատիպերն այն մասին, որ այնտեղ գտնվողներն «անարժան» հանցագործներ են, հանրության շրջանակում ստեղծել է անտարբերության և բացասական վերաբերմունքի մթնոլորտ: Արդյունքում, ազատագրվածան վայրերում գտնվող անձանց իրավունքներով զբաղվելը հաճախ առաջացնում է հանրության անհանդուրժողականությունը և զայրոյթը: Այսպես, որքան էլ դա զարմանալի է, սակայն առանձնապես մեծ աղմուկ չեն բարձրացնում նաև քրեակատարողական հիմնարկներում մահացածների հարազատները: Ավելին, հայտնի չէ որևէ դեպք, երբ ՔԿՀ-ում արձանագրված մահի առնչությամբ պատասխանատվության կանչվի որևէ պաշտոնատար անձ:

Վերոգրյալի լույսի ներքո, Սլավիկ Ոսկանյանի գործն իր բնույթով հանդիսանում է եզակի գործերից մեկը, երբ կալանավայրում գտնվող անձի մահվան կապակցությամբ այրին բողոքում և արդարադատության իրականացում է պահանջում: Այս գործով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի պատվերով նախաքննության փուլում որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչներ են ներգրավվել ՀՀ Փաստաբանների պալատի անդամներ, փաստաբաններ Էդմոն Մարությանը և Կարեն Թումանյանը:



6.2. Սլավիկ Ոսկանյան

Գործի նախապատմությունը



Սլավիկ Ոսկանյանը մեղադրվում էր 2011 թվականի հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած Սվետլանա Կազազյանի⁴³ սպանության և Աստղիկ Աղաբեկյանի նկատմամբ կատարված ավազակային հարձակման

մեջ: Դատարանի որոշմամբ Սլավիկ Ոսկանյանի նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել կալանքը, ինչի արդյունքում նա գտնվում էր «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում: Հոկտեմբերի 24-ին նա մահացել է կալանավայրում: ՔԿ վարչության կողմից տարածված տեղեկատվության համաձայն՝ կալանավորն իրեն թուք է ներարկել և գանգրենայի հետևանքով մահացել: Ս. Ոսկանյանն ի սկզբանե խոստովանական ցուցմունք էր տվել՝ հայտարարելով, որ վերոհիշյալ երկու հանցագործություններն էլ կատարվել են իր կողմից: Սակայն հետագայում Ոսկանյանի կողմից Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ ուղարկված նամակում նա պատմել էր ոստիկանությունում իր նկատմամբ կիրառված հոգեբանական ճնշումների ու սպառնալիքների մասին, որի արդյունքում վերջինս տվել էր խոստովանական ցուցմունքներ: Նամակում Ոսկանյանը գրել էր, որ ինքը չի սպանել Սվետլանա Կազազյանին և միայն կատարել էր ավազակային հարձակումը: Նաև պատմել էր, որ իրեն Վանաձորի ոստիկանության ձերբակալվածների համար նախատեսված վայրում ենթարկել են հոգեբանական ու ֆիզիկական բռնությունների: Գրել էր նաև, որ հոգեբանական ճնշումներ են գործադրվել նաև կնոջ նկատմամբ, ինչի արդյունքում նա ստիպված է եղել «իր վրա վերցնել» իր կող-

⁴³ Սվետլանա Կազազյանը հանդիսանում էր ՀՀ ոստիկանության Վանաձորի բաժնում աշխատող ոստիկանի մայր:



մից չկատարված հանցագործությունը:

Նախաքննություն

Կալանավոր Ոսկանյանի մահվան փաստի առնչությամբ Լոռու մարզի քննչական բաժնում «Վանաձոր» ՔԿՀ բժիշկ Մարգալետ Մինասյանի նկատմամբ հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով⁴⁴: 8 ամիս տևած քննությունից հետո քրեական գործի վարույթը կարճվեց՝ հանցակազմի բացակայության հիմքով: Ստորև բերված են նախաքննության առավել ուշագրավ բացթողումները.

1. վեց ամիս շարունակ նախաքննական մարմինը փորձում էր հիմնավորել, որ կալանավոր Ոսկանյանը մահացել է ՔԿՀ բժիշկ Մինասյանի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով: Մինչդեռ կալանավորի հիվանդության և բուժման ընթացքում ՔԿՀ բժիշկը գտնվել է արձակուրդում:
2. 2011 թ. հունիսի 13-ին «Հետք» թերթի կողմից տպագրված հոդվածում⁴⁵ բժիշկ Մարգալետունի Մինասյանը հավաստիացրել էր, որ ՔԿՀ ղեկավարությունն ու քրեակատարողական վարչությունը տեղյակ են եղել կալանավորի առողջական ծանր վիճակից, բայց ոչինչ չեն արել նրան քաղաքացիական բուժհաստատություն կամ «Դատապարտյալների հիվանդանոց» տեղափոխելու համար: Հոդվածում միաժամանակ նշված էր, որ անձամբ Լոռու մարզի դատախազն էր արգելել հիվանդ կալանավորին ՔԿՀ-ից տեղափոխել:

⁴⁴ 1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփոյթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս`...: 2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ...՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

⁴⁵ <http://hetq.am/arm/investigation/2090/kalanavori-mahy-bzhshki-vra-en-bardum.html>



3. Հիմք ընդունելով հիշյալ հոդվածը՝ Սլավիկ Ոսկանյանի իրավահաջորդի՝ նրա այրիի ներկայացուցիչ, փաստաբան Էդմոն Մարությանը գրություն է ուղարկել ՀՔԾ պետին՝ խնդրելով պարզել հոդվածում նկարագրված հանգամանքները՝ պաշտոնատար անձանց անգործության վերաբերյալ: Նշված գրությանը պատասխան չի տրվել: Դեռ ավելին, մի քանի օր անց, բժիշկ Մինասյանն աշխատանքից ազատվեց, պաշտոնական մեկնաբանությամբ՝ սեփական դիմումի համաձայն: Մինչ օրս «Վամաձոր» ՔԿՀ-ն բժիշկ չունի:
4. Վերոնշյալ հոդվածում բժիշկը պատմել էր նաև ՔԿՀ-ի բուժքույր Նոնա Սարգսյանի զեկուցագրի մասին, որով բուժքույրը ՔԿՀ պետ Արտյոմ Մխոյանին հայտնել էր կալանավորի վիճակի և հետագայում վերջինիս առողջության հնարավոր վատթարացման մասին՝ խնդրելով, որպեսզի ՔԿՀ պետը համապատասխան կարգադրություն արձակի հիվանդի վերաբերյալ: Պետը գրությունը մակագրել էր բժիշկ Մարգարետունի Մինասյանին՝ քրեակատարողական վարչության բուժսպասարկման բաժնի հետ հարցը շտապ քննարկելու համար: Բժիշկ Մինասյանը պետի հրահանագը կատարել է: Այդ մասին նույնիսկ ՀՔԾ քննիչն է վկայել քրեական գործը կարճելու մասին որոշման մեջ՝ նշելով. «Հիվանդի վիճակի մասին բժիշկը պարբերաբար զեկուցել է ՔԿՀ ղեկավարությանը և ԱՆ ՔՊԻՎ բժշկական սպասարկման բաժնին»: Նախաքննական մարմինը քննության առարկա չի դարձրել բուժքրոջ զեկուցագիրը: Այս պաշտոնական փաստաթուղթը, թեև մուտքագրվել է ՔԿՀ գրանցամատյանում, սակայն քրեական գործի նյութերից բացակայել էր և հայտնվել է ամիսներ անց քրեական գործի կարծումից հետո (տե՛ս հավելված 2-րդը):
5. Սլավիկ Ոսկանյանի մահվան գործով նշանակվել է դատաբժշկական 3 փորձաքննություն, որոնցից հանձ-



նաժողովային փորձաքննությունների եզրակացություններում առկա են եղել էական հակասություններ: Երկրորդ փորձաքննության արդյունքներով՝ «բժշկը պարտավոր էր հիվանդին հետագա բուժման համար ուղեգրել հիվանդանոց», ապա նշված է, թե «հիվանդին տրված բուժումը ՔԿՀ պայմաններում հակացուցված չի եղել, սակայն եղել է ոչ արդյունավետ»: Իսկ շարունակության մեջ դարձյալ հետևություն է արվել ստացիոնար բուժման անհրաժեշտության մասին. «Եթե հիվանդը շուտ տեղափոխվեր հիվանդանոց և ստանար համապատասխան (կոնսերվատիվ և վիրաբուժական) բուժում, ապա հնարավոր կլիներ կանխել հիվանդության բացասական ելքը»: Այնինչ, երրորդ եզրակացության մեջ նախ նշվել է, որ «հիվանդությունը կանխելու և բուժման պրոցեսները լավացնելու համար հարկավոր էր հիվանդին ուղարկել ստացիոնար բուժման, քանի որ տվյալ հիվանդության բուժման հիմնական միջոցառումները վիրաբուժական բնույթի են, որոնք կարող էին հնարավորություն տալ կանխել հիվանդության հնարավոր բացասական ելքը»: Այնուհետև նշված է. «Սակայն հարկավոր է նշել, որ նման ծանր հիվանդությունների դեպքում՝ անաէրոբ ինֆեկցիա (գազային գանգրենա), երբեմն ստացիոնար պայմաններում կատարված բուժօգնությունը նույնպես լինում է անարդյունավետ, առավել ևս, երբ հիվանդը պարբերաբար պոկել է վիրակապը՝ դրանով նպաստելով ինֆեկցիայի խորացմանը և ընդհանուր վիճակի ծանրացմանը»: Ուշադրության է արժանի նաև հանձնաժողովի այն եզրահանգումը, թե. «Սլավիկ Ոսկանյանի դեպքում ասել, թե արդյոք վիրակապի հաճախակի պոկելը ունեցե՞լ է բացասական ազդեցություն վերքի լավացման վրա, թե՞ ոչ, հնարավոր չէ, քանի որ այդ առումով բավարար չեն բժշկական փաստաթղթերի տվյալները»: Երրորդ փորձաքննությունից հետո քրեական գործը կարճվել է:



Այսպես, ամփոփելով նախաքննության ընթացքը՝ միանշանակ կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետությունը չի իրականացրել օբյեկտիվ և բազմակողմանի քննություն, քանի որ մի շարք կարևորագույն հարցերի նախաքննությամբ տրված չեն պատասխաններ, իսկ նախաքննության բուն ընթացքը արդեն իսկ կասկածելի և հակասական է: Մասնավորապես, քննություն չի կատարվել վեր հանելու համար այն պատճառները՝ ինչու է Սլավիկ Ոսկանյանը ինքնավստահ գնացել, ինչպես է ՔԿՀ-ում հայտնվել արգելված իր համարվող ներարկիչը, արդյոք Սլավիկ Ոսկանյանի կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակ հղված նամակում նկարագրված բռնությունները իսկապես տեղի էին ունեցել, ինչպես նաև կասկածի տեղիք են տալիս նախաքննության ընթացքում նշանակված երեք դատաբժշկական փորձաքննությունների իրար հակասող արդյունքները: Նման պայմաններում, երբ նախաքննության ավարտին ավելի շատ են մութ մնացած հարցերը, քան պարզված պատասխանները, անհնար է խոսել այդ քննության արդյունավետության և պետության պոզիտիվ պարտականության կատարման մասին:

Դատաքննություն

Սլավիկ Ոսկանյանի իրավահաջորդի՝ կնոջ՝ Շուշանիկ Ոսկանյանի ներկայացուցիչներ, փաստաբաններ Էդմոն Մարուքյանն ու Կարեն Թումանյանը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան էին բողոքարկել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչի կողմից կայացված՝ քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, որը դատարանը մերժել էր: Վերաքննիչ դատարանը ևս բողոքը մերժեց և ներկայումս սույն գործը գտնվում է ՀՀ վճռաբեկ դատարանում:

Հատկանշական է, որ դատաքննության ընթացքում բողոքարկվել է կալանավորի մահվան փաստի առնչությամբ քրեական գործի չհարուցելու մասին որոշումը և որևէ կերպ չի էլ արձարծվում



կամ քննարկվում Սլավիկ Ոսկանյանի կյանքի իրավունքի խախտման հարցը:

Գործի վերլուծություն

Հատուկ քննչական ծառայությունը և դատական ատյանները, Սլավիկ Ոսկանյանի մահվան փաստի առնչությամբ կայացնելով քրեական գործ չհարուցելու մասին որոշում և այդ որոշումը համարելով օրինական, հիմնավորված ու պատճառաբանված խախտել են ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածը: Նշված պնդումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով.

1. ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Գ. Պետրոսյանը 2011 թվականի օգոստոսի 30-ին որոշում է կայացրել քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին՝ նկատի ունենալով, որ «Վանաձոր» ՔԿՀ կալանավոր Սլավիկ Ժորժիկի Ոսկանյանի մահվան առնչությամբ «Վանաձոր» ՔԿՀ բժիշկ Մարգարետունի Մինասյանի կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, վնասվածքը պատճառվել է ինքնավնասման միջոցով և որևէ անձի գործողություններում չկա հանցակազմ, ուստի անհրաժեշտ է քրեական գործի վարույթը կարճել և քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:
2. Նախաքննության մարմինը, նշված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելով, չի նշել, թե ում գործողություններում առկա չէ հանցակազմի հատկանիշներ և հանցակազմի որ հատկանիշն է բացակայում: Նախաքննության նյութերից երևում է, որ քրեական գործը հարուցվել է փաստի առթիվ և որևէ անձի մեղադրանք չի



առաջադրվել, հետևաբար, չկա նաև քրեական հետապնդում:

3. Նախաքննության մարմինը քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման մեջ որպես հաստատված հանգամանք է նշել այն, որ Սլավիկ Ոսկանյանը դատապարտյալների հիվանդանոց տեղափոխվելու նպատակով «Վանաձոր» ԲԿՀ-ի խցում թուք է սրսկել ձախ սրունքի վերին երրորդականի շրջանում՝ մաշկի տակ, որն առաջացրել է վերք և առաջին անգամ բուժօգնության է դիմել 2010 թ. հոկտեմբերի 18-ին: Սակայն, թե ինչպես է այդ արգելված իրը ներմուծվել «Վանաձոր» ԲԿՀ-ի տարածք, նախաքննության մարմնի կողմից որևէ գործողություն չի արվել պարզելու նշված հանգամանքը: Ավելին, նախաքննությամբ չի հաստատվել նաև այն հանգամանքը, որ Սլավիկ Ոսկանյանը թուք է սրսկել ինքն իրեն, որպեսզի տեղափոխվի դատապարտյալների հիվանդանոց: Նախաքննության մարմինը որևէ գործողություն չի կատարել պարզելու համար այն հանգամանքը, թե Սլավիկ Ոսկանյանի առողջական վիճակը վատանալուց հետո ինչու չեն նրան անհապաղ տեղափոխել դատապարտյալների հիվանդանոց, որտեղ ստացիոնար բուժման միջոցով հնարավոր կլիներ նրա կյանքը փրկել:
4. Ընդհանուր իրավասության դատարանը և ՀՀ վերաքննիչ դատարանը, մերժելով բողոքաբերի հայցը և օրինական համարելով քրեական գործ չհարուցելու մասին որոշումը, անտեսել են վերոհիշյալ խախտումները, շարունակելով և ամրագրելով նախաքննության թույլ տված խախտումները, այնինչ տվյալ պարագայում դատական ստուգման ընթացքում պետք է սահմանվեր, որ ՀՀ իրավասու մարմինների կողմից Սլավիկ Ոսկանյանին անհապաղ դատապարտյալների հիվանդանոց չտեղափոխելը և հիվանդ կալանավորին ստացիոնար բուժման հնարավորություն չտալը



հավասարազոր Է Սլավիկ Ոսկանյանի կյանքի նկատմամբ պետության միջամտությանը, որի արդյունքում ստացիոնար բժշկական օգնության կարիք ունեցող հիվանդ դատապարտյալը մահացել է:

5. Դատարանները պետք է հաշվի առնեին նաև այն հանգամանքը, որ Սլավիկ Ոսկանյանի մահը վրա է հասել նրան ստացիոնար պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու և քաղաքացիական հիվանդանոց կամ «Դատապարտյալների կենտրոնական հիվանդանոց» ՔԿՀ չտեղափոխելու հետևանքով նա չի ստացել պատշաճ բժշկական օգնություն, որի արդյունքում նա զրկվել է կյանքից:

Եվրոպական դատարանում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ երբ տեղի է ունենում ոտնձգություն մարդկային կյանքի նկատմամբ, նա ունի նաև դատավարական բնույթի պարտավորություններ: Այսինքն՝ պետության իրավական համակարգի շրջանակներում պետք է անցկացվեն արդյունավետ քննություններ, որոնք հնարավորություն կտան ձշգրիտ կերպով հաստատել փաստերը, որոնց հիման վրա միայն, անհրաժեշտության դեպքում, պետության պաշտոնատար անձանց կարելի կլինի ենթարկել պատասխանատվության:

Սլավիկ Ոսկանյանի մահվան փաստի առթիվ անցկացված քննությունը որևէ կերպ չի կարող համարվել արդյունավետ, քանի որ քրեական գործի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ են դառնում բազմաթիվ հակասություններ, որոնց նախաքննության մարմինը ոչ մի կերպ չի անդրադարձել: Եվրոպական դատարանն իր վճիռներում նշել է, որ պետությունների ներկայացուցիչների, օրինակ անվտանգության ուժերի աշխատակիցների մեղքով անձանց



մահվան կապակցությամբ ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում:

Բացի նշված հանգամանքներից, Դատարանը քննության չի առել նաև այն փաստը, որ 2011 թվականի հունիսի 15-ին թիվ ԱԱ N 93-11 գրությամբ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, փաստաբան Էդմոն Մարությանը դիմել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ պարոն Ա. Միրզոյանին՝ խնդրելով հանձնարարել գործը քննող համապատասխան քննիչին՝ քննարկել 2011 թվականի հունիսի 13-ի Հետաքննող լրագրողների «Հետք» էլեկտրոնային թերթում <http://hetq.am/arm/articles/2090/> տպագրված «Կալանավորի մահը բժշկի՞ վրա են բարդում» վերնագրով հոդվածը և համապատասխան հետևություններ անել պարզելու համար հոդվածում նշված պաշտոնատար անձանց առընչությունն ու մեղավորությունը Սլավիկ Ոսկանյանին ստացիոնար պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու և քաղաքացիական հիվանդանոց կամ «Դատապարտյալների կենտրոնական հիվանդանոց» ՔԿՀ չտեղափոխելու վերաբերյալ, որի հետևանքով մահացել է Սլավիկ Ոսկանյանը, սակայն նախաքննության մարմինը միջոցներ չի ձեռնարկել մամուլում հրապարակված և տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կողմից բարձրացված հարցերի պարզաբանման ուղղությամբ:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ գլխավոր դատախազության, Սլավիկ Ոսկանյանի սպանության փաստի վերաբերյալ չիրականացնելով օբյեկտիվ, բազմակողմանի և արդյունավետ քննություն, խախտել է «Մարդու իրավունք-



ների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պետության պոզիտիվ պարտավորությունը, քանի որ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների մեղքով անձանց մահվան կապակցությամբ ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում:



7. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԱՅՈՒՄԸ

ՆՅԱՐԴԱՅՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՎԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

7.1. Իրավիճակի ներկայացում

Ողջ Հայաստանի տարածքում 2011 թ. հունվար-մարտ ամիսներին արձանագրված մահվան դեպքերը 2010 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ աճել են. 2010 թ. առաջին եռամսյակում, ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ տարածքային բաժիններից ստացված մահվան վերաբերյալ ակտերի համաձայն, մահացածների թիվը կազմել է 7193 մարդ, իսկ 2011 թ. նույն ժամանակահատվածում՝ 7851: Առաջատարն է արյան շրջանառության համակարգի հիվանդությունների հետևանքով մահացությունների թիվը՝ այս տարվա առաջին եռամսյակում կազմել է 3881, մինչդեռ 2010-ի նույն ժամանակահատվածում՝ 3684: Երկրորդ տեղում են դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացությունները, որոնց թիվը նույնպես նախորդ տարվա համեմատ աճել է՝ 302 մահացության դեպք: Վիճակագրության համաձայն՝ մահացությունների թիվն աճել է ըստ բոլոր հիմնական պատճառների՝ համեմատած 2010 թ. ցուցանիշների⁴⁶:

ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության նյարդահոգեբուժական բուժհաստատություններից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2010 թ. ընթացքում այս հաստատություններում մահացությունների թիվը կազմել է 36, 2011 թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 15-ը՝ 22:

Հարկ է նշել, որ բուժհաստատություններից երկուսում մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում 2011 թ. 2010 թ. համեմատությամբ մահերի թիվն ավելացել է: Այսպես, Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական բուժհաստատությունում մինչև սեպտեմբերի 15-ն ընկած ժամանակահատվածում 2011 թ. մահե-

⁴⁶ <http://www.panorama.am/am/society/2011/05/18/statistics/>



րի թիվն ավելացել է 1-ով, իսկ Սևանի հոգեբուժական հիվանդանոցում՝ 4-ով: Միննույն ժամանակ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում մահերի թիվը նույն ժամանակահատվածում նվազել է՝ 2010 թ. դիսպանսերում գրանցվել է մահվան 1 դեպք, իսկ 2011 թ.՝ 0:

Բուժհաստատություններում մահացությունների դեպքերի պատճառներ են հանդիսացել սոմատիկ տարբեր հիվանդությունները:

ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում 2010 թ. մինչ 2011 թ. սեպտեմբերի 15-ը գրանցված մահացության դեպքերի կապակցությամբ քրեական գործեր որպես կանոն չեն հարուցվել, մասնավորապես քրեական գործեր հարուցվել են միայն բուժհաստատություններից մեկում, որոնք կարծվել են հանցակազմի բացակայության պատճառով:

Ստորև ներկայացվում է մահացությունների դեպքերը նյարդահոգեբուժական բուժհաստատություններում 2010 թ. մինչ 2011 թ. սեպտեմբերի 15-ը և մահացությունների վերաբերյալ քրեական գործերի հարուցումը.

N	Հաստատության անվանումը	2010 թ. մահացությունների թիվը	2011 թ. հունվար – սեպտեմբերի 15-ը մահացությունների թիվը	Քրեական գործերի հարուցումը
1	Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր	4	3	Մահվան բոլոր դեպքերի մասին անմիջապես զեկուցվել է ոստիկանություն, սակայն որևէ դեպքում քրեական գործ չի հարուցվել՝ հանցակազմի բացակայության պատճառով



2	Գյուճարու հոգեկան առողջության կենտրոն	2	0	Մահվան դեպքերի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել	
3	Լոռու մարզային հոգեէնյարդաբանական դիսպանսեր	1	0	Քրեական գործ չի հարուցվել	
4	Սևանի հոգեբուժական հիվանդանոց	6	9	Մահվան բոլոր դեպքերի մասին հայտնված է ոստիկանություն, ՀՀ զվհավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչություն, բոլոր մահացածների դիակերծումը կատարվել է դատական բժշկի կողմից, քրեական գործերը կարծվել են հանցակազմի բացակայության պատճառով	
5	Արմաշի առողջության կենտրոն	4	3	Մահվան փաստի առթիվ քրեական գործ չի հարուցվել	
6	Հոգեբուժական բժշկական կենտրոն	Նուբարաշենի կլինիկա	14	6	Մահվան փաստերի առթիվ ոչ մի քրեական գործ չի հարուցվել
		Ավանի կլինիկա	0	1	
		Նորքի կլինիկա	5	0	
		Քասախի կլինիկա	0	0	
Ընդամենը		36	22		



Փաստորեն, վերը նշվածից կարելի է եզրակացնել, որ բուժ-հաստատություններում մեծ թիվ են կազմում պացիենտների մահացությունների դեպքերը, որոնց պատճառները, ըստ բուժ-հաստատություններից ստացված տեղեկատվության, սոմատիկ հիվանդություններն են: Այսինքն, կարելի է ենթադրել, որ պատշաճ ուշադրության չի արժանանում բուժհաստատություններում պացիենտների սոմատիկ հիվանդությունների բուժումը, ինչպես նաև իրավապահ մարմինների կողմից պատշաճ ուշադրության չի արժանանում բուժհաստատություններում մահացությունների դեպքերի քննությունը, ինչը չի ապահովում պացիենտների կյանքի իրավունքի պաշտպանությունը նյարդահոգեբուժական բուժհաստատություններում:

Միևնույն ժամանակ ուշագրավ է, որ, համենայն դեպս, ՀՔԱ Վանաձորի գրասենյակին հայտնի չի մի որևէ դեպք, երբ ՀՀ նյարդահոգեբուժական բուժհաստատություններում իրենց մահացած հարազատի կյանքի իրավունքի խախտման ծանաչման նպատակով դիմեն իրավապահ և դատական համակարգին: Նման իրավիճակը էլ ավելի խոցելի է դարձնում առանց այն էլ սահմանափակ հնարավորություններ և արդեն իսկ խոցելի համարվող անձանց կյանքի իրավունքի ապահովման երաշխավորումը, այն դեպքերում, երբ հոգեկան առողջության խնդիր ունենալու հետևանքով անձը տեղափոխվում էր (իր կամքով կամ դատարանի որոշման հիման վրա) փակ հաստատություն՝ իր մասին հոգածությունը վստահելով պետությանը:



8. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱՅԼ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Վերջին տարիներին, ցավոք սրտի, մեծ թիվ են կազմում մահացությունների դեպքերը ՀՀ ոստիկանությունում, դպրոցներում, հիվանդանոցներում, որոնք ևս հանդիսանում են պետության հոգածության և պատասխանատվության ներքո գտնվող հաստատություններ: Ստորև ներկայացվում են մի քանի դեպքեր, որոնք տեղի են ունեցել 2007-2011 թթ. ընթացքում վերոհիշյալ մարմիններում և որոնց գործերով զբաղվել կամ ներգրավված է եղել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը:

8.1. Դպրոց

Դերենիկ Գասպարյանը մահացել էր 2010 թ. հունիսի 5-ին Չարենցավանի թիվ 5 դպրոցում համադասարանցիների կողմից ծեծի ենթարկվելու արդյունքում: Պատահարը տեղի է ունեցել դպրոցում քննության ժամանակ, և տասնամյա տղային համադասարանցիների կողմից ծեծի ենթարկելու պահին դպրոցի ադմինիստրացիան միջոցներ չի ձեռնարկել ծեծկռտուքը կանխելու ուղղությամբ, ինչը Դերենիկ Գասպարյանի մահվան պատճառ է դարձել:



2010 թ. հունիսի 5-ին չորրորդ դասարանի աշակերտ Դերենիկ Գասպարյանի ծնողները որդուն տարել են դպրոց մաթեմատիկայի քննության մասնակցելու համար և երեխային հանձնել դասղեկ Սուսաննա Կակոյանի և մաթեմատիկայի ուսուցչուհի Էլմիրա Կարապետյանի հսկողությանը, սակայն դպրոցում երեխաների



համար պատասխանատու վերը նշված ուսուցչուհիները, զբաղված լինելով ոչ պայմանագրային աշխատանքով, երեխաներին թողել են առանց հսկողության, որի հետևանքով Դերենիկ Գասպարյանը մահացել է: Տասնամյա Դերենիկ Գասպարյանի մահվան հետ կապված քրեական գործը հարուցվել էր 46 օր ուշացումով և ոչ թե մահվան փաստի առթիվ, այլև մինչև մահը հասցված թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասի հատկանիշներով՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Հետագայում քրեական գործի վարույթը կարճվել է առանց որևէ մեկին մեղադրանք առաջադրելու և առանց Դերենիկ Գասպարյանի կյանքի իրավունքին որևէ կերպ անդրադառնալու: Քննիչի որոշումը Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավաբան Արայիկ Չալսյանը, ով տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ էր հանդիսանում սույն գործով, բողոքարկել էր դատական կարգով, ինչի արդյունքում դատարանը որոշել էր, որ նախաքննությունն ընթացել է էական բացթողումներով և պարտավորեցրել էր նախաքննություն իրականացնող մարմնին կատարել նոր, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն: Քննչական մարմինը, ևս մեկ անգամ կատարելով քննություն, կրկին կարճել էր քրեական գործի վարույթը, ինչը ներկայումս բողոքարկվել է դատական կարգով:

8.2. Հիվանդանոց

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոնականի քննչական բաժնում հարուցված քրեական գործով վանաձորցի **Արման Անտոնյանի** նկատմամբ բժշկական օգնություն իրականացրած անձանց կողմից մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հանգամանքը պարզելու նպատակով կատարվում է կրկնակի հանձնաժողովային դատաբժշկական փորձաքննություն:



Քրեական գործը հարուցվել է ՀՀ քր. օր.-ի 130 հոդվածի 2-րդ մասով, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփոյթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության հարուցիչով վարակում:

Արմանը մահացել է 2010 թ. ապրիլի 5-ին՝ սուր լյարդային անբավարարությունից՝ կապված վիրուսային հեպատիտ B-ի ֆուլմինատիվ ընթացքով (կայծակնային չարորակ ձև)՝ լյարդի օջախային մեռուկների առաջացումով:

Արման Անտոնյանը երեխա չունենալու պատճառով 2009 թ. նոյեմբերից մինչև փետրվարի 27-ը եղել է Սեքսապաթոլոգիայի վերականգնողական քաղաքային կենտրոնի բժիշկ-սեքսապաթոլոգ Արթուր Բաղդասարյանի հսկողության տակ, իսկ նույն տարվա հունվարի 17-ից մինչև փետրվարի 27-ն ընկած ժամանակահատվածում բուժման կուրս է անցել նրա մոտ: Մեկ ամիս անց Արման Անտոնյանի վիճակը կտրուկ ծանրացել է, նա չի կարողացել շարժվել, ջերմությունը բարձրանում էր մինչև 40 աստիճան, գույնն էլ՝ դեղին էր: Հարազատները մի քանի անգամ շտապօգնություն են կանչել, երկու անգամն էլ շտապօգնության բժիշկները հարազատներին հայտնել են, որ անհանգստանալու կարիք չկար, ուղղակի գրիպային վիճակ է: Հաջորդ օրը՝ մարտի 31-ին, Արման Անտոնյանի մարմինը փքվել է, իսկ 5 օրից նա մահացել է:

Քրեական գործի նյութերում, մինչ գործի վարույթը կարճելն ու նոր նախաքննություն սկսելու որոշում կայացնելը, տուժողի մայրը ներգրավված է եղել որպես իրավահաջորդ: Սակայն քրեական գործի վարույթը վերսկսելու որոշումից հետո նախաքննական մարմինը Սուսաննա Անտոնյանին որպես տուժողի իրավահաջորդ չի ներգրավել՝ այդ կերպ զրկելով Արման Անտոնյանի հարազատներին համապատասխան տեղեկատվություն ստանալու իրավունքից⁴⁷:

⁴⁷ <http://www.azatutyun.am/content/article/24235517.html>



Լերկայումս Սուսաննա Անտոնյանը դիմել է ՀՀ Կենտրոն և Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ պահանջելով վերացնել ՀՀ ոստիկանության ՔԳՎ Երևան քաղաքի քննչական վարչության կենտրոնական քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Պողոսյանի կայացրած քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը:



8.3. Ոստիկանություն

2010 թ. ապրիլի 13-ին գողության կատարման կասկածանքով ՀՀ ոստիկանության Չարենցավանի բաժանմունք բերման է ենթարկվել **Վահան Խալաֆյանը**, որտեղից նրան դուրս են բերել մահացած: Պաշտոնական վարկածի համաձայն՝ Վահան Խալաֆյանը ոստիկանության բաժնում բռնությունների ենթարկվելու արդյունքում դանակով ինքնասպանություն է գործել:



Ըստ հարազատների և իրավապաշտպան կազմակերպությունների՝ Վահան Խալաֆյանը ոչ թե ինքնասպան էր եղել, այլ նրան սպանել էին ոստիկանության աշխատակիցները: Մահացած երիտասարդի մոր խոսքերով, որդու կրծքավանդակին սուր գործիքով արված խաչաձև կտրվածքներ են եղել, որովայնի շրջանում 2 անցք է եղել, իսկ ամբողջ մարմինը պատված է եղել կապտուկներով:

2010 թ. նոյեմբերի 29-ին Կոտայքի մարզի ընդհանուր իրա-



վասության դատարանը հաստատված համարեց ինքնասպանության վարկածը և 8 տարվա ազատազրկման դատապարտեց Չարենցավանի ոստիկանության քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Աշոտ Հարությունյանին, ում ներկայացվել էր այս գործով ամենաճանր մեղադրանքը: Ըստ պաշտոնական վարկածի՝ նրա կիրառած բռնությունների հետևանքով է Վահան Խալաֆյանը ինքնասպան եղել: Ամբաստանյալ, Չարենցավանի ոստիկանության օպերիազոր Մովսես Հայրապետյանին դատարանը դատապարտեց երկու տարվա փորձաշրջանով պայմանական ազատազրկման:

Վերաքննիչ քրեական դատարանը մերժել է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Արտակ Չեյնալյանի կողմից բերված վերաքննիչ բողոքը: Դեռ ավելին. Դատարանը որոշել էր Հայաստանի անկախության 20-ամյակի կապակցությամբ հայտարարված համաներումը կիրառել գործով գլխավոր ամբաստանյալ՝ ոստիկանության Չարենցավանի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի նախկին պետ Աշոտ Հարությունյանի նկատմամբ՝ նրա պատժի չկրած մասը կրճատելով մեկ երրորդով:

Դատարանը համաներում էր նաև կիրառել Մորես Հայրապետյանի նկատմամբ. նա ազատվեց պատժից⁴⁸:

Լևոն Գուլյանը 2007 թ. մայիսի 12-ին որպես վկա կանչվել է ՀՀ ոստիկանության Շենգավիթի բաժին, հետո տեղափոխվել ՀՀ ոստիկանության շենք: Մի քանի ժամ անց նրա ընտանիքի անդամները տեղեկացել են, որ Լևոնը մահացել է:

Ըստ ոստիկանության վարկածի, Լևոն Գուլյանը փախուստի փորձ կատարելիս ընկել է երկրորդ հարկից ու մահացել: Գուլյանի հարազատների պնդմամբ,



⁴⁸ <http://www.azatutyun.am/content/article/24235517.html>



Լևոնի մահը ոստիկանների կիրառած ծեծի և խոշտանգումների հետևանք է: Երկու տարի անարդյունավետ հետաքննությունից հետո՝ 2009 թ. ապրիլի 16-ին, ՀՀ հատուկ քննչական ծառայությունը երկրորդ անգամ կարճեց Լևոն Գուլյանի մահվան փաստի առնչությամբ հարուցված քրեական գործը՝ «հանցակազմի բացակայության» հիմքով: Ոչ մի պաշտոնյա պատասխանատվության առաջ չի կանգնեցվել Հայաստանի ոստիկանության բաժնում մահվան դեպքի համար:



2011 թ. հունիսի 14-ին ոստիկանության աշխատակիցների կողմից մահ է պատճառվել 29-ամյա **Արման Ենգիբարյանին**: Նույն թվականի ապրիլ-հունիս ամիսներին մայրաքաղաքի տարբեր համայնքներում արձանագրվել էին մի շարք ավազակային հարձակումներ: Հունիսի 14-ին ոստիկանությունում նոր ահազանգ ստացվեց նմանատիպ հարձակման փորձի կատարման մասին: Ոստիկանները կասկածելով, որ հնարավոր է այդ դեպքը նույն շարքից է, անմիջապես մեկնեցին ահազանգի հետքերով: Հետապնդելով ավազակային հարձակումներ կատարելու մեջ կասկածվողին՝ մետրոյի «Գարեգին Նժդեհ» կայարանի մուտքի մոտ ոստիկանության ծառայողները 2 կրակոցով (որովայնի և գլխի շրջանում) սպանել էին Արման Ենգիբարյանին:

8.4. Արման Ենգիբարյան

Գործի նախապատմությունը

Ըստ նախաքննության մարմնի՝ 2011 թ. հունիսի 14-ին՝ ժամը 13:05-ի սահմաններում, Արման Սերգեյի Ենգիբարյանը, կատարելով նախապատրաստական գործողություններ, Գևորգ Սահակյանի գույքն ավազակային հարձակմամբ հափշտակելու նպատա-



կով, ներկայանալով որպես ջրմուղ-կոյուղու աշխատակից, փորձել է խաբեությանմբ ապօրինի մուտք գործել բնակարան, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել, քանի որ Գևորգ Սահակյանը բնակարանի մուտքի դուռը չի բացել և զանգահարել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազոր Նարեկ Պետրոսյանին:



Դեպքի վայր ժամանած ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազորներ Աշոտ Աղասյանը և Նարեկ Պետրոսյանը, կատարելով իրենց ծառայողական պարտականությունները, անմիջապես ուղևորվել են Մանանդյան փողոց և մոտեցել են Գևորգ Սահակյանի մատնանշած անձին, ով հանդիսացել է Արման Ենգիբարյանը:

ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի օպերլիազորներ Աշոտ Աղասյանը և Նարեկ Պետրոսյանը չեն եղել ոստիկանական համազգեստով, սակայն, ըստ իրենց ցուցմունքների, Արման Ենգիբարյանին նրանք ներկայացել են, որ հանդիսանում են ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցներ, ցույց են տվել վկայական և խնդրել միասին գնալ ոստիկանության բաժին՝ պարզաբանումներ կատարելու համար:

Ոստիկանության աշխատակիցները թևանցուկ են արել Արման Ենգիբարյանին և շարժվել դեպի ավտոմեքենան: Հասնելով ավտոմեքենային՝ Արման Ենգիբարյանը հրաժարվել է նստել ավտոմեքենան, դիմադրել է ոստիկանության աշխատակիցներին, հրել, քաշքշել նրանց, ազատել ձեռքերը, որից հետո գոտկատեղից հանել է ատրճանակը, բերել մարտական վիճակի և ուղղելով ոստիկանների վրա՝ սպառնացել է, թե կկրակի ու դիմել է փախուստի:



Ոստիկանության աշխատակիցներն ատրճանակները բերել են մարտական վիճակի, որից հետո Աշոտ Աղասյանը զգուշացրել է, որ կկրակի, երկու անգամ նախազգուշական կրակել է օդ և Նարեկ Պետրոսյանի հետ հետապնդել Արման Ենգիբարյանին:

Ըստ ոստիկանների ցուցմունքների, Արման Ենգիբարյանը վազելու ընթացքում թեքվել և կրակել է ոստիկանների ուղղությամբ, որի ժամանակ Արման Ենգիբարյանի և Աշոտ Աղասյանի հեռավորությունը եղել է 2-3 մետր: Նրա կրակոցից անմիջապես հետո Աշոտ Աղասյանը պատասխան կրակոց է արձակել, որից հետո չսպասելով իր առաջին կրակոցի արդյունքին՝ Աշոտ Աղասյանը երկրորդ կրակոցն է արձակել Արման Ենգիբարյանի ուղղությամբ, որից անմիջապես հետո Արման Ենգիբարյանը բերանքսիվայր ընկել է:

Ոստիկանության աշխատակիցներն անմիջապես շտապօգնություն են ահազանգել, սակայն մինչև շտապօգնության գալը որևէ մեկը չի փորձել Արման Ենգիբարյանին առաջին օգնություն ցուցաբերել և նրա մարմինը արնահոսելով մնացել է հատակին ընկած այնքան ժամանակ, մինչև շտապօգնության աշխատակիցները ժամանել են դեպքի վայր և Արման Ենգիբարյանին անգիտակից տեղափոխել «Էրեբունի» բժշկական կենտրոն, որտեղ էլ Արման Ենգիբարյանը, գիտակցության չգալով, վիրահատություն սկսելուց քիչ անց մահացել է:

Նախաքննություն

2011 թ. հունիսի 14-ին ՀՀ ոստիկանության ՔԳՎ ՀԿԳ քննության վարչությունում հարուցվել էր քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 35-175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 316-րդ հոդվածի 2-րդ մասով:

2011 թ. հունիսի 15-ին քրեական գործն ըստ քննչական ենթակայության ուղարկվել էր ՀՀ հատուկ քննչական ծառայություն, որտեղ նույն օրը քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածով հարուցվել էր նոր քրեական գործ և միացվել ավագակային հարձակում կատարելու նախապատրաստության



և իշխանության ներկայացուցչի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու դեպքերի առթիվ հարուցված քրեական գործին:

2011 թ. հունիսի 27-ին փաստաբան Էդմոն Մարուքյանը դիմել էր ՀՀ ՀՔԾ պետին և հայտնել, որ վերը նշված դեպքի հետևանքով սպանված Արման Ենգիբարյանի հայր Սերգեյ Գրիգորի Ենգիբարյանը ցանկանում է իրականացնել տուժողի իրավունքները և պարտականությունները և Մարուքյանին լիազորել էր, որպեսզի նշված քրեական գործի շրջանակներում ներկայացնի վերջինիս շահերը՝ որպես տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ: 2011 թ. հուլիսի 8-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Գևորգյանը պատասխանել էր, որ «...Արման Ենգիբարյանի հորը՝ Սերգեյ Ենգիբարյանին, տուժողի իրավահաջորդ, իսկ Ձեզ՝ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ ճանաչելու հարցը կքննարկվի ՀՀ ոստիկանության աշխատակիցների արարքներին վերջնական իրավական գնահատական տալուց հետո»:

Այսպես մինչև նախաքննության ավարտը, չնայած փաստաբանի բոլոր հնարավոր բողոքարկումներին, նախաքննության մարմինն այդպես էլ Արման Ենգիբարյանի հորը չի ճանաչել որպես տուժողի իրավահաջորդ և համապատասխանաբար Էդմոն Մարուքյանին էլ տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, ինչպես նաև վերջիններիս չեն տրամադրվել նախաքննության արդյունքում կազմված քրեական գործի նյութերը:

2011 թ. սեպտեմբերի 5-ին Էդմոն Մարուքյանը ՀՀ ՀՔԾ-ից ստացված գրությամբ տեղեկացվել էր, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Գևորգյանի կողմից կայացվել էր որոշում ՀՀ քրեական օրենսգրքի 107-րդ հոդվածով հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Այս որոշումը ևս բողոքարկվել էր վերադասության կարգով, սակայն մնացել անփոփոխ, ինչից հետո սույն որոշումը բողոքարկվել էր դատարան:



Դատարանություն

2011 թվականի նոյեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը որոշում էր կայացրել՝ Սերգեյ Ենգիբարյանի ներկայացուցիչ Էդմոն Մարությանի բողոքը՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Գ. Գևորգյանի կողմից 2011 թվականի հուլիսի 21-ին կայացված՝ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման դեմ ներկայացված բողոքը մերժել:

2011 թվականի դեկտեմբերի 20-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով բողոքաբերների ներկայացրած վերաքննիչ բողոքը՝ Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի որոշման դեմ, որոշում էր կայացրել վերաքննիչ բողոքը մերժելու և Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 2011 թվականի նոյեմբերի 2-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

2012 թվականի փետրվարի 24-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշում է կայացրել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին:

Ներկայումս գործն ուղարկվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Գործի վերլուծություն

Պետության նեգատիվ պարտավորության մասով

Իրավապահ և դատական մարմինները, որևէ կերպ չեն անդրադարձել դիմումատուների և նրանց ներկայացուցչի կողմից վկայակոչված **կյանքի իրավունքի խախտման վերաբերյալ փաստարկներին**:

Նշված պնդումը հիմնավորվում է հետևյալ փաստարկներով. ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրա-



վունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում են համարվում դիտավորյալ այն գործողությունները, որոնք, պաշտպանվողի համար ակնհայտ, չեն համապատասխանում ոտնձգության բնույթին և վտանգավորությանը: Անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ արարքը հանցագործություն է, եթե հատկապես նախատեսված է սույն օրենսգրքի հատուկ մասով:

Այսպիսով, իրավապահ և դատական մարմինները անտեսել են Արման Ենգիբարյանի կյանքի իրավունքի խախտման փաստը և չեն ուսումնասիրել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, ինչպես նաև քրեական գործի փաստաթղթերը, քանի որ դրանց ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀԲ օպերիվագորներ Աշոտ Աղասյանի և Նարեկ Պետրոսյանի գործողությունները՝ Արման Ենգիբարյանին հրազենային վնասվածքներ հասցնելու և սպանելու փաստը, լավագույն դեպքում կարող էր որակվել որպես անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում, բայց երբեք չէր կարող վնաս պատճառած արարքը քրեական օրենքով համարվեր իրավաչափ կամ անհրաժեշտ պաշտպանություն, քանի որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀԲ օպերիվագորներ Աշոտ Աղասյանի և Նարեկ Պետրոսյանի գործողություններն ակնհայտորեն չեն համապատասխանում Արման Ենգիբարյանի ոտնձգության բնույթին և վտանգավորությանը:

Ավելին, իրավապահ և դատական մարմիններն ընդհանրապես անտեսել են այն հանգամանքը, որ Արման Ենգիբարյանի ձեռքին եղել է գազային ատրճանակ, որի դեմ պաշտպանվելիս



Մակարով տեսակի ատրճանակ կիրառելը ակնհայտորեն չի համապատասխանում ենթադրյալ ոսնձգության բնույթին և վտանգավորությանը:

Քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման մեջ նշված է, որ Արման Ենգիբարյանը չի ենթարկվել ոստիկանների օրինական պահանջին, դիմել է փախուստի, որի ընթացքում իր մոտ եղած ատրճանակից կրակել է ոստիկանների ուղղությամբ, որից հետո Աշոտ Աղասյանն իրեն ամրակցված Մակարով տեսակի ատրճանակից կրակել է Արման Ենգիբարյանի վրա, ինչի հետևանքով վերջինս մահացել է:

Իրավապահ և դատական մարմինները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ նկարագրված իրավիճակում ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀԲ օպերիվազորներ Աշոտ Աղասյանը և Նարեկ Պետրոսյանը, 3-4 մետր հեռավորության վրա գտնվելով, լսելով և տեսնելով Արման Ենգիբարյանի կրակոցը, հասկացել են կամ պարտավոր էին հասկանալ, որպես ոստիկանության աշխատակիցներ տարբերակել, որ նա կրակում է գազային ատրճանակից, հետևաբար գտնվելով բավարար հեռավորության վրա՝ պաշտպանվողի, տվյալ պարագայում ոստիկանների կամ մեկ այլ անձի կյանքին, առողջությանը և իրավունքներին, հասարակության կամ պետության շահերին այնպիսի վտանգ չէր սպառնում, որի համար արդարացված լիներ հրազենի օգտագործմամբ Արման Ենգիբարյանին կյանքից զրկելը:

Իրավապահ և դատական մարմինները հաշվի չեն առել այն հանգամանքը, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀԲ օպերիվազորներ Աշոտ Աղասյանը և Նարեկ Պետրոսյանը բավարար չափով դասընթացների և պարապմունքների միջոցով, պետական միջոցների հաշվին նման պայմանների համար ձեռք են բերել հատուկ պատրաստվածություն, հետևաբար պարտավոր էին կիրառել բոլոր միջոցները, որպեսզի առանց Արման Ենգիբարյանի կյանքին վնաս հասցնելու վնասագերծեին նրան:



Այսպիսով, իրավապահ և դատական մարմինները, ուսումնասիրելով քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը, քրեական գործի փաստաթղթերը և դրանց բովանդակության մեջ առկա հակասությունները, պետք է հանգեին այն եզրահանգմանը, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Արաբկիրի բաժնի ՔՀԲ օպերլիազոր Աշոտ Աղասյանը Արման Ենգիբարյանին սպանել է ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում, և նրա սպանությունն ինքնին չի կարող օրինական և իրավաչափ համարվել, քանի որ Արման Ենգիբարյանի մահը **բացարձակապես անհրաժեշտ** չի եղել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշված որևէ նպատակն իրականացնելիս:

Պետության պոզիտիվ պարտավորության մասով

Եվրոպական դատարանում ձևավորված պրակտիկայի համաձայն՝ պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է, որ երբ տեղի է ունենում ոստնձգություն մարդկային կյանքի նկատմամբ, նա ունի նաև դատավարական բնույթի պարտավորություններ: Այսինքն՝ պետության իրավական համակարգի շրջանակներում պետք է անցկացվի արդյունավետ քննություն, որը հնարավորություն կտա ձգգրիտ կերպով հաստատել փաստերը, որոնց հիման վրա միայն, անհրաժեշտության դեպքում, պետության պաշտոնատար անձանց կարելի կլինի ենթարկել պատասխանատվության:

Տվյալ պարագայում, Արման Ենգիբարյանին ոստիկանության աշխատակցի կողմից կյանքից զրկելու փաստի առթիվ անցկացված քննությունը որևէ կերպ չի կարող համարվել պատշաճ և արդյունավետ, քանի որ քրեական գործի փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ են դառնում բազմաթիվ հակասություններ, որոնց իրավապահ և դատական մարմինները ոչ մի կերպ չեն անդրադարձել:



Օրինակ՝ ոստիկանության աշխատակիցների ցուցմունքների համաձայն՝ Աշոտ Աղասյանը զգուշացրել է, որ կկրակի և 2 անգամ նախազգուշական կրակել է օդ և Նարեկ Պետրոսյանի հետ հետապնդել Արման Ենգիբարյանին, այնուհետև 2 անգամ կրակել Արման Ենգիբարյանի ուղղությամբ:

Մինչդեռ, դեպքի վայրի գննությամբ հայտնաբերվել է «Մակարով» տեսակի ատրձանակից կրակելու համար նախատեսված փամփուշտի 3 պարկուժ, ինչպիսի հանգամանքը հերքում է ոստիկանների կողմից տրված ցուցմունքներն առ այն, որ 2 անգամ նախազգուշական օդ է կրակվել:

Օրինակ՝ քննության պատշաճությունը գնահատելիս հարկ է նշել, որ բավարար չափով չի պարզվել Արման Ենգիբարյանի ուղղությամբ կրակոցներ արձակելու մեխանիզմը: Մասնավորապես չի պարզվել, թե թիվ 1 վերքային խողովակը առաջացել է առաջին կրակոցի հետևանքով, թե երկրորդ կրակոցի, այսինքն առաջին կրակոցը Արման Ենգիբարյանի գլխի հատվածն է խոցել, թե պոչուկային շրջանը: Նշված հանգամանքը, համապատասխան գնահատականի չի արժանացել նախաքննության մարմնի, Դատարանի և Վերաքննիչ դատարանի կողմից:

Տվյալ պարագայում, նախաքննության մարմինը թույլ է տվել խախտում, քանի որ ոստիկանները հարցաքննվել են դեպքից մեկ օր անց և այդ ընթացքում ոչինչ չի ձեռնարկվել նրանց միմյանցից մեկուսի պահելու համար: Նշված հանգամանքը ապացուցվում է նրանով, որ ոստիկանները գրեթե իրարից չտարբերվող ցուցմունք են տվել, որը վկայում է այն մասին, որ ոստիկանները գաղտնի համաձայնության են եկել միմյանց հետ, այնուամենայնիվ, միայն այն փաստը, որ չեն ձեռնարկվել նման համաձայնության վտանգի նվազեցմանն ուղղված համապատասխան քայլեր, հանդիսանում է նախաքննության պատշաճության եական թերություն:

Պոզիտիվ պարտավորությունը խախտվել է նաև այն հիմքով, որ տուժողի ներկայացուցիչներին հնարավորություն չի տրվել մասնակցել հարուցված վարույթին: Արդյունավետ քննություն կա-



տարելու դատավարական բաղադրիչի տարրը պահանջում է ապահովել արդյունավետ դատական համակարգ, որի պահանջը է կարող է բավարարված համարվել նաև այն դեպքում, երբ տուժողին հնարավորություն է տրվում գործուն մասնակցություն ունենալ հարուցված վարույթին: Այս պայմանը հատկապես կարևոր է այնպիսի իրավական համակարգերում, որտեղ մահվան հանգամանքների ու ապացույցների ստացումը կատարվում է պետական մարմինների փակ քննությամբ⁴⁹: Հայաստանը պատկանում է այն պետությունների թվին, որտեղ նախաքննությունը կատարվում է միայն պետախիշխանական ֆունկցիա ունեցող մարմնի կողմից, որի ընթացքում պաշտպանի մասնակցությունը բացառվում է: Ըստ վկայակոչված նախադեպի, նման համակարգերի դեպքում քննության մատչելիության իրավունքի ապահովումը տուժողի կամ նրա իրավահաջորդի համար վճռորոշ նշանակություն է ձեռք բերում⁵⁰: Չնայած ՀՀ օրենսդրությամբ նման կառուցակարգ նախատեսված է, տվյալ դեպքում տուժողի իրավահաջորդի պաշտպանին՝ Էդմոն Մարությանին, հնարավորություն չի տրվել մասնակցել վարույթին, նրան չեն տրամադրվել նույնիսկ նախաքննության արդյունքում կազմված քրեական գործի նյութերը: Իսկ այն հանգամանքը, որ պաշտպանը հնարավորություն է ունեցել բողոքարկել ՀԲԾ-ի որոշումը, անհամեմատելի է այն դատավարական իրավունքների հետ, որոնք պաշտպանը կստանար, եթե տուժողի հայրը ստացած լիներ տուժողի իրավահաջորդի կարգավիճակ, իսկ պաշտպանն էլ, համապատասխանաբար՝ տուժողի իրավահաջորդի ներկայացուցչի կարգավիճակ: **Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս ՀՀ գլխավոր դատախազության և ՀՀ հատուկ քննչական ծառայության, այնուհետև նաև Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների, Արման Ենգիբարյանի սպանության փաստի վերաբերյալ չիրականացնելով օբյեկտիվ, բազմակողմանի և արդյունավետ**

⁴⁹ Օսերյիլդիզն ընդդեմ Թուրքիայի, թիվ 48939/99, 30/11/2004, § 149:

⁵⁰ Նույն տեղը:



քննություն, խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված պետության պոզիտիվ պարտավորությունը, քանի որ ոստիկանության աշխատակիցների մեղքով անձանց մահվան կապակցությամբ ներպետական մակարդակով անկախ, լիակատար և արդյունավետ հետաքննություն չանցկացնելը հանդիսանում է պետության կողմից «կյանքի իրավունքն օրենքով պաշտպանելու» իր պարտավորության խախտում: Նույն հոդվածի շրջանակներում պետությունը կրում է նաև նեգատիվ պարտականություն, որով արգելվում է մարդուն կյանքից ապօրինի զրկել, որը տեղի է ունեցել սույն գործով զոհ հանդիսացող Արման Ենգիբարյանի պարագայում:



9. ԱՄՓՈՓՈՒՄ

Կյանքի իրավունքի ապահովումն օրենսդրական և գործնական մակարդակներում

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետությունն օրենսդրական մակարդակում լիովին արգելել է մահապատժի կիրառումը և սահմանադրության մակարդակում ամրագրել, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, այնուամենայնիվ, ՀՀ քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ պաշտպանվողի կամ մեկ այլ անձի կյանքը, առողջությունը և իրավունքները, հասարակության կամ պետության շահերը հանրության համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով պաշտպանելիս, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում»։ ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված է. «Հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը հանցանք կատարած անձին վնաս է պատճառել նրան՝ իրավասու մարմիններին հանձնելու կամ նրա կողմից հանրության համար նոր վտանգավոր արարք կատարելու հնարավորությունը խափանելու նպատակով բռնելիս, եթե դրա համար անհրաժեշտ միջոցների սահմանների անցում թույլ չի տրվել»։ Եվ երրորդ հոդվածը, որով կարգավորվում է կյանքի իրավունքի սահմանափակումը, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն որի. «Հանցագործություն չի համարվում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ տվյալ անձի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը, իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին անմիջականորեն սպառնացող վտանգը վերացնելու համար, եթե



այդ վտանգը չէր կարելի վերացնել այլ միջոցներով, և թույլ չի տրվել ծայրահեղ անհրաժեշտության սահմանների անցում»:

Սկզբունքայնորեն, այս նորմը որևէ հակասության մեջ չէ և ավելին համահունչ է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի սկզբունքներին, որը թույլ է տալիս անձին զրկել կյանքից ի թիվս այլ հիմքերի նաև «...ցանկացած անձի անօրինական բռնությունից պաշտպանելու համար, օրինական ձերբակալում իրականացնելու ... նպատակով օրենքին համապատասխան գործողությունը ձեռնարկելու համար»: Այդուհանդերձ, նշված բացառությունները կիրառելու համար չափազանց բարձր շեմ է սահմանվում և պետությունները պետք է կարողանան հիմնավորել, որ կյանքից զրկելը հանդիսացել է ծայրահեղ միջոց:

«Կարողանան հիմնավորել» եզրույթի տակ հասկացվում է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության անցկացում, որի ընթացքում նախաքննության մարմինը, բացահայտելով բոլոր հարցերը և քննարկելով բոլոր հնարավոր վարկածներն ու իրավիճակները, հանգի միակ և անկասկածելի եզրահանգման, որ եթե տվյալ անձին կյանքից չզրկեին, ապա վերջինս կարող էր լուրջ վնաս հասցնել այլոց:

Ցավոք սրտի, առավել խնդրահարույց և դժգոհություն առաջացնող ոլորտներից են հանդիսանում քննչական մարմինների աշխատանքն ու դատական իշխանության նկատմամբ անվստահությունը: Մասնավորապես, Արման Ենգիբարյանին հետապնդող ոստիկանները նրան երկու կրակոցով պատճառել էին մահ քաղաքի բանուկ հրապարակներից մեկում ցերեկվա ժամին, մինչդեռ քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով, այլ ոչ թե 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հատկանիշներով, որը նախատեսում է սպանություն շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով: Արդյունքում, Արման Ենգիբարյանին քրեական գործով որևէ կարգավիճակ չի տրվել, մասնավորապես, տուժող չի ծանաչվել, չնայած այն հանգամանքին, որ ոստիկանների ակտիվ



գործողությունների արդյունքում զրկվել էր կյանքից, իսկ փոխարենը, արարքը որակելով ՀՀ քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ նախաքննության մարմինը առանց նախաքննության իրականացման արդեն իսկ կանխորոշել էր, որ ոստիկանների արարքը եղել էր իրավաչափ: Դեռ ավելին, նույն հոդվածի տրամաբանությունից ելնելով՝ Արման Ենգիբարյանը եղել է հանցանք կատարած անձ, այնինչ հետապնդվելու ընթացքում վերջինս չի եղել ոչ կասկածյալի և ոչ էլ մեղադրյալի կարգավիճակում, հետևաբար եղել է անմեղ անձ:

Միևնույն ժամանակ, մտահոգիչ է նաև դատական ստուգման պրակտիկան, քանի որ չնայած փաստաբանների և իրավապաշտպանների բոլոր ջանքերին, որպեսզի դատարանները ճանաչեն և ամրագրեն մարդու կյանքի իրավունքի խախտում, դատարանները խուսափում են նման եզրույթի օգտագործումը, ինչի արդյունքում անհնարին է դառնում տուժողի իրավահաջորդների կողմից փոխհատուցման՝ այդ թվում նաև բարոյական վնասի փոխհատուցման պահանջի ներկայացումը իրենց հարազատների կյանքի իրավունքը խախտողներին: Մինչդեռ թվում է, թե Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը իրենց թիկունքում ունենալով հանդերձ դատարաններին ոչինչ չէր կարող խանգարել կոնցեպտուալ նոր մոտեցում ցուցաբերել և իրենց որոշումներում իրավական դիրքորոշում արտահայտել՝ սահմանելով, *inter alia*, որ խախտվել է տուժողի կյանքի իրավունքը: Կարծում ենք, որ այս պրակտիկան անխուսափելի է և վաղ թե ուշ դատարանները նման պրակտիկա կորդեգրեն:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ Հայաստանի Հանրապետությունը, օրենսդրական մակարդակում ունենալով միջազգային պահանջներին լիովին համապատասխանող երաշխիքներ կյանքի իրավունքի ապահովման բնագավառում, ունի լուրջ խնդիրներ այդ երաշխիքների ապահովման տեսանկյունից:



ՄԻԵՂ վճիռների ցուցակ

Կալանավայրում

- *Թանլին ընդդեմ Թուրքիայի*, թիվ 26129/95, 10/04/2001 - անձը մահացել է ոստիկանությունում՝ հարցաքննության առաջին ժամերի ընթացքում. ոստիկանությունը հայտարարել է, թե նա մահացել է ինֆարկտից:
- *Քեննան ընդդեմ Միացյալ Թագավորության*, թիվ 27229/95, 03/04/2001- ինքնասպանություն կալանավայրում:
- *Անգուելովան ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 38361/97, 13/06/2002 - անձը ենթարկվել է արգելված վերաբերմունքի կալանավայրում և նրան չի տրամադրվել պատշաճ բժշկական օգնություն:
- *Աբդուրահամ Օրակն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 31889/96, 14/02/2002, - կալանավորը մահացել է կալանավայրում:
- *Պոլն ու Օդրի Էդվարդսն ընդդեմ ՄԹ*, թիվ 46477/99 - կալանավորին սպանել է հոգեկան խանգարում ունեցող խցակիցը:
- *Ակտասն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 24351/94, 24/04/2003 - մահացել է կալանավորը և արդյունավետ քննություն չի կատարվել:
- *Իկինցիսոյն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 26144/95, 27/07/2004 - մահ ԶՊՎ-ում և քննության անարդյունավետություն:
- *Ահմեդ Օզկանն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 21689/93, 06/04/2004 - կալանավորը մահացել է թոքաբորբի հետևանքով, որը պայմանավորված է եղել կալանավայրի պայմաններով, ինչպես նաև այն հանգամանքով, որ նրան ստիպել են ոտաբորբիկ քայլել ձյան վրայով:
- *Սլիմանին ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 57671/00, 27/07/2004 - կայացվել է որոշում անձին երկրից արտաքսելու մասին, սակայն մինչև որոշման կատարումը կալանավորը մահա-



ցել է արտաքսվողների համար նախատեսված քրեակատարողական հիմնարկում՝ բժշկական խնամքի բացակայության պատճառով:

- *A.K.-ն ու V.K.-ն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 38418/97,30/11/04 - ինքնասպանություն կալանավայրում:
- *Տրուբնիկովն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 49790/99, 5/07/2005 - ինքնասպանություն բանտում և քննության անարդյունավետություն:
- *Օզնանյովան և Չորանը ընդդեմ Բուլղարիայի*, թիվ 46317/99, 23/02/2006 - անձը մահացել է ոստիկանությունում, երբ գտնվում էր կասկածյալի կարգավիճակում:
- *Տարարիևան ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 4353/03 - ոչ պատշաճ բժշկական խնամք, որի արդյունքում բանտարկյալը մահացել է կալանավայրում:
- *Ռենտլոն ընդդեմ Ֆրանսիայի*, թիվ 5608/05, 16/10/2008 - հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորը մահացել է կալանավայրի կարգապահական խցում:
- *Ձիցիակն ընդդեմ Լեհաստանի*, թիվ 77766/01, 09/12/2008 - մինչդասական կալանքի տակ գտնվող կալանավորին չի տրամադրվել պատշաճ բժշկական խնամք:
- *Հորոզն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 1639/03 - երկարաժամկետ հացադուլի նստած կալանավորի մահը:
- *Յասինսկան ընդդեմ Լեհաստանի*, թիվ 28326/05 - Կալանավորի ինքնասպանությունը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հոգեմետ դեղերի մեծ քանակության ընդունելու միջոցով:
- *Միզիզարովան ընդդեմ Սլովակիայի*, թիվ 74832/01, 14/12/2010 - ինքնասպանություն ՁՊՎ-ում:
- *Յասինսկին ընդդեմ Լատվիայի*, թիվ 45744/08, 21/12/2010 - խուլ ու համր կալանավորին չի տրամադրվել պատշաճ բժշկական խնամք կալանավայրում:
- *Պեկերն ընդդեմ Թուրքիայի (2)*, թիվ 42136/06, 12/04/2011



- կալանավորը մահացել է հրազենի վնասվածքից կալանավայրում:

- *Դե Դոնդերն ու Դե Կլիպպելն ընդդեմ Բելգիայի*, թիվ 8595/06, 06/12/2011 - հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կալանավորը, ով պահվում էր սովորական խցում, գործել է ինքնասպանություն:
- *Մախարաձենն ու Սիխարուլիձենն ընդդեմ Վրաստանի*, թիվ 35254/07, 22/11/2011 - տուբերկուլյոզով հիվանդ կալանավորին արդյունավետ բուժում չի տրվել:

Բանակում

- *Ատամանն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 46252/99, 27/04/2006 - հոգեկան խանգարում ունեցող զորակոչիկը կատարել է ինքնասպանությունը և արդյունավետ քննություն չի կատարվել պարզելու համար մեղավորներին:
- *Աբդուլլահ Յիլմիզն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 21899/02, 17/07/2008 - զինվորը ենթարկվել է ծեծի և նվաստացումների սերժանտի կողմից, որից դրդված կատարել է ինքնասպանություն իրեն ամրագրված զենքից:
- *Բեքերն ընդդեմ Թուրքիայի*, թիվ 27866/03, 24/03/2009 - պետության՝ զինվորական կառույցում զինվորականի մահվան վերաբերյալ ողջամիտ բացատրություն տրամադրելու պարտավորության մասին:
- *Լյուֆլի Դեմիրչինն ու այլոք ընդդեմ Թուրքիայի*, թիվ 28809/05, 02/03/2010 - հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զինվորի ինքնասպանությունը զինվորական ծառայության ժամանակ:

Նյարդահոգեբուժական բուժհաստատությունում

- *Մալակունն ու այլոք ընդդեմ Ռումինիայի*, թիվ 55093/09 (դատարանը դեռ որոշում չի կայացրել): Դիմումը բերվել է հինգ անձանց անունից, ովքեր մահացել են մի նյարդա-



հոգեբուժական բուժաստատությունում, որը հանրության մեջ վատ հեղինակություն ուներ այն պատճառով, որ այնտեղ հաճախ էին տեղի ունենում մահվան դեպքեր՝ հիմնականում ծմռանը (2004 թվականի ընթացքում արձանագրվել են 155 դեպք):

- *Կամպեանուն ընդդեմ Ռումինիայի* (դեռ որոշում չի կայացվել):

